

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՎ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանասեր Հր. Մուրադյանի «Ռ. Պատկանյանի մի սխալ գնահատականի առ-
թիվ» «Պատմա-բանասիրական հանդեսի» անցյալ տարվա № 3-ում զետեղված
հոդվածի հենց սկզբում քննադատը հայտարարում է, որ հրաժարվելով
դրադվել «Նալբանդյանը և նրա ժամանակը» իմ աշխատության ընդհանուր
գնահատականի «դժվարին խնդրով», անդրադառնալու է սոսկ այդ դրքի այն
էջերին, որոնք առնչվում են Ռ. Պատկանյանի գնահատականին:

Ինչ խոսք, որ քննադատի իրավունքն էր սահմանափակելու իր ասելիքը
միայն «դժվարին» թվացող այդ հարցով:

Մի բան սակայն անփիճելի է: Պատկանյանին տված իմ գնահատականի
«սխալը» բացահայտելուց առաջ քննադատը սլարտավոր էր ներկայացնել ըն-
թերցողին գրքի դրա հետ առնչվող ընդհանուր բովանդակությունը, կամ գեթ
այն էջերի բովանդակությունը, ուր խոսք կա Պատկանյանի մասին: Քննադա-
տը չի անում այդ: Եվ դեռ ավելին, նա շրջանցում է կամ խեղաթյուրված լույսի
տակ դնում այն փաստերն ու հարցերը, որոնց լուսաբանումը կազմում է
քննարկվող գրքի ու Պատկանյանին վերաբերող էջերի նյութն ու առանցքը:
Ըստ էության հարվածի առկա առնելով սոսկ ընդհանուր կապակցությունից
սլոկված հատուկ կետեր ու արտահայտություններ, քննադատը փաստորեն
խուսափում է Պատկանյանի նկատմամբ գրքում առաջ քաշված գրույթների և
դրանց հիման վրա նրան տրված իմ գնահատականի քննարկումից: Այլ խոսքով
քննադատը ոչ միայն շրջանցել է իմ գրքի անսառը, այլև անտեսել է նրա այն
ծառերը, որ փորձել է կացնահարել:

Ընթերցողին հայտնի է, դուցե, որ իմ գիրքը դրված է ոչ թե գրականագի-
տական, այլ սլատմագիտական ասպեկտով, և Պատկանյանի իմ գնահատակա-
նը տրված է Նալբանդյանի հետ ունեցած նրա գաղափարական փոխհարաբե-
րությունների կապակցությամբ: Քննադատը անընդհատ ջանում է արհամար-
հել այս հանգամանքը և փոխադրել Պատկանյան-մտածողին նվիրած իմ էջե-
րի քննարկումը գաղափարաբանական հարթավայրից, Պատկանյան-բա-
նաստեղծի ստեղծագործության դրական-էսթետիկական գնահատականի ոլոր-
տը:

Հարկավ իմ գրքում չի անտեսված նաև Պատկանյան-բանաստեղծի գնահա-
տականը: Սակայն Պատկանյան-բանաստեղծի գնահատականը ես չէի կարող
առանցք դարձնել մի դրքի, որի բուն նյութը Նալբանդյանի և նրա ժամանակա-
կիցների գաղափարական կապերի ու փոխհարաբերությունների խնդիրն էր:

խնդիր, որ բստ էություն համընկնում է ոչ միայն աշխատանքային կոչման «նախնադրականության», այլև սովետահայ պատմագիտության առավել աշխատանքային և առավել բարդ հարցերից մեկին. XIX դարի վերջին տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժումների ու հոսանքների գնահատականի հետ: «Նախնադրականը և նրա ժամանակը» հետազոտությունը ևս գիտել և՛ որպես նախադրական սովետահայ պատմագիտության բարդ ու աշխատանքային հարցի մարքսիստական-լենինյան լուսաբանության համար:

Իմ գրքի խնդիրն էր ցույց տալ, թե ինչպե՞ս էին նախնադրական ու նրա գործակիցները մի կողմից, և նրանց հակառակորդները մյուս կողմից, բնական լուծ իրենց ժամանակի հրատապ հարցերը. ինչպե՞ս էին բնագոյացում կամ դիմակայում դրանց լուծմանը: Իմ նպատակն էր հասու լինել նրանց ժամանակի առաջավոր պահանջներին բնագոյացող գրական խոսքի իմաստությունը, և միաժամանակ հաշվի առնել այն նախապաշարումները, որոնք կաշկանդում էին նրանցից ոմանց մտահորիզոնն ու առաջագիմական քայլափոխերը:

«Այդ ո՞ր մեծ գրողն է, — հարցնում է իմ քննադատը, — որ անկախ ժամանակաշրջանով պայմանավորված իր որոշ սխալներից ու սահմանափակություններից հանդես չի եկել իրեն առաջավոր գաղափարների գրողական լի և չի ստեղծել ժամանակի առաջագրած հարցերին պատասխան տվող մեծարվեստ երկեր»:

Հարցադրումը ճիշտ է: Սակայն քննարկվող գրքում շոշափված են ոչ թե Պատկանյանի պատահական «սխալներն ու վրիպումները», այլ նրա այն «սխալներն ու վրիպումները», որոնք օրինաչափ էին ոչ միայն Պատկանյանի, այլև նրա կուսակիցների ու համախոհների համար:

«Սխալներ ու սահմանափակություններ» էին դրանք, որոնք անդրադարձել են Պատկանյանի ստեղծագործության գաղափարական բովանդակությանը և սեմուր կնիք դրել նրա ժամանակաշրջանի հասարակական իրադարձությունների վրա: Իրանք կարևորություն են ստանում մանավանդ այն տեսակետից, որ օգնում են բացահայտելու Պատկանյանի և նախնադրական գաղափարական ներհակության հասարակական-քաղաքական իմաստը:

Հակառակ քննադատի ենթադրության՝ իմ նպատակը չի եղել Պատկանյանի գաղափարական դիրքավորումը «մոռյալ ֆոն» դարձնել նախնադրական գնահատականի համար: Ֆոնի որպիսությունը կախված էր ոչ թե իմ կամքից, այլ պատմական իրողությունների վիճակից: Եթե իմ գրքում նախնադրականը մի քայլ առաջ է անցնում, կամ մի գլուխ բարձր երևում իր ժամանակակիցներից, դա պիտի վերագրվի ոչ թե իմ նկարած «մոռյալ ֆոնին», այլ նախնադրականի իրական արժանիքին: Եթե քննադատը զեղուհ է, որ նախնադրականի կողքին զրկելու գեպում նրա աչք կամ այն նշանավոր ժամանակակից գործունեությունը կարող է երևալ նվազ խոշոր կամ նվազ հմայիչ, այդ պիտի վերագրել միայն այն բանին, որ ինչպե՞ս նախնադրականին, այնպե՞ս էլ նրա ժամանակակիցներին և ներկայացնում և՛ առանց շտապի ու սեղուրի, իրենց բնական կերպարանքով և իրական այն դերի մեջ, որպիսին նրանք կատարել են հայ կյանքում՝ անցյալ դարի 50—60-ական թվականներին:

Չեմ կամենում երաշխավորել, թե պատմական գեպերն ու գեմերը գիտել և՛ սառն ու անտարբեր աչքով: Սակայն մոլի կիրքը կամ նախապաշարված

դոգմատիզմը չի եղել իմ խորհրդատուն և ոչ էլ պատմական դեմքերն ու դեպքերը «մեկը մյուսից անկախ» մատուցելու քննադատի հանձնարարած ամենակեր օրյակափոխմը, այլ պատմական պրոցեսները, անձերն ու իրադրություններն իրենց բարդ հարաբերակցությունների մեջ ընդգրկելու գիտական անհահանջ ձգտումը:

* * *

Սխալ է քննադատի աչի ունդումը, թե ևս անվերապահորեն ժխտական դիրք էմ գրավել «Պատկանյան-քաղաքացու, քաղաքական-հասարակական գործչի, ինչպես նաև բանաստեղծի գրական ուղղության և ողջ ստեղծագործության գնահատության» հարցում¹: Ճիշտ է միայն այն, որ ևս ժխտական դիրք էմ գրավում սխալ այն գնահատականի հանդեպ, որ տրվում է Պատկանյանին քննադատի կողմից:

Քննադատը բախում է բաց դռներ, երբ կամենում է համոզել ինձ, թե Պատկանյանը «ակաթիվ խառնվածքի» տեր քաղաքացի-բանաստեղծ էր և պրոգրեսիվ տրամադրությունների տեր մի հայրենասեր, որ նվիրված էր իր ժողովրդի ազատագրման իդեալին կամ հասարակական մի գործիչ, որ սլայրարում էր ազգային վերնախավերի դեմ և այլն:

Անցյալ դարի կեսերին զարգացման կրիտիկական շրջանը թևակոխած հայ ազգային զարթոնքը, որի ցցուն արտահայտություններից մեկն էր Պատկանյանը, ժամանակի սոցիալ-տնտեսական պրոգրեսիվ տեղաշարժերի արձագանքն էր: Ռուսաստանում ծավալվող կապիտալիզմը, նվրոսլայում և Ռուսաստանում արծարծվող սոցիալիստական շարժումները, ցարիզմի Կովկասում տարած գաղութային քաղաքականության, եվրոպական պետությունների Ռուսիայում ունեցած միջամտության ակտիվացումը՝ այս ամենը մեծապես նպաստել են հայ ժողովրդի ազգային-քաղաքական ակտիվացմանը և մասնավորապես՝ ուղղություն տվել Պատկանյանի ազատասիրական սրունդիային:

Պատկանյանը, գրել էմ ևս, պրական իր գործունեությամբ «ընդառաջում էր կովկասահայերի ազգային-քաղաքական կոնսոլիդացման պրոգրեսիվ այն շարժմանը, որ տեղի էր ունենում Անդրկովկասի հայաբնակ գավառներում, Ռուսաստանին միանալու ժամանակներից ի վեր: Իր գաղափարաբանությամբ բանաստեղծը ոչ միայն արձագանքում էր Արևմուտքի և Ռուսաստանի մանր ու ճնշված ժողովուրդների զարթոնքին, այլև նրանց ազատագրական ձգտումներին»²:

Ես չեմ մխտել Պատկանյանի ազատասիրական պոլ զիալի և նրա դարաշրջանը հատկանշող սոցիալ-քաղաքական տեղաշարժերի սերտ կապը: Այլ միայն չեմ ժխտել այդ, այլև դրա մատնանշումով էլ հենց սկսում էմ գրողին նվիրված իմ տեսությունը, շեշտելով նրա դիմաշրջումը դեպի ժողովրդական մասսաները. «բանաստեղծը,— գրել էմ ևս,— ապավինում է հայ գյուղացու «ջրուտ ձևոներին», նրա բահ ու հրացանին, նրա «անվահեր» սրտին ու «աղնիվ խորհուրդներին»...: ժողովրդի հարստահարիչների դեմ ուղղված թունոտ ծաղրի,

¹ «Պատմա-բանասիրական հանդես», Նույն տեղում, էջ 223.

² Նախնական և նրա ժամանակը, 11, էջ 106:

հայաժողովների նկատմամբ բուռն ասեկություն մեջ զգացվում էր բանաստեղծի տենչը՝ ամեն ինչ ի սպաս դնելու ազգային-քաղաքական շարժման հաղթանակին»¹։ Միաժամանակ արձանագրում էմ. «Այս ամենը, անշուշտ, իդեալական շփման որոշ կետեր էր ստեղծում Պատկանյանի և Նալբանդյանի միջև»։ «Պատկանյանի քաղաքացիական բանաստեղծությունը,— գրում էմ ես մի այլ տեղ,— ընունդ առավ սոցիալական նույն այն միջավայրում, ուսկից սկիզբ էր առել նաև Նալբանդյանի հրապարակախոսությունը։ Այստեղից էլ առաջ էին դալիս նրանց արտահայտած տրամադրությունների որոշ խաչաձևումները։ Նալբանդյանի հետ միաժամանակ նա ևս մտրակում էր հայ իշխաններին ու բարձրագույն եկեղեցականներին, ազաններին ու մեծատոններին, հնատիպ առևտրականներին ու նորատիպ կապիտալիստներին»²։ «Միայն սոցիալական ընդհանուր միջավայր էլ,— նշված է իմ գրքում,— որ գաղափարական ընդհանրություն էր ստեղծում Նալբանդյանի և Պատկանյանի միջև, այլև այն, որ նրանք ջուր էին խմել նաև իդեալական ազդեցության ընդհանուր ակունքներից։ «Տարակույս չկա,— ասված է այդտեղ,— որ 60-ական թվականներին «Մանուկ Հայաստանի» հետապատկերը գծագրվում էր 1830—40 թվականներին շրջանառություն գործած «Երիտասարդ Երասխա», «Երիտասարդ Գեղամահա», «Երիտասարդ Լեհաստան» և «Երիտասարդ Ռուսաստան» գաղափարների ներշնչման ներքո։ Եվ այդ հանգամանքն է նենց, որ «Մանուկ Հայաստանի» կամ, որ միևնույն է, «Երիտասարդ Հայաստանի» ուրվականը այնքան անհանգստություն էր պատճառում ուսու և հայ սեակցիոն շրջաններին»³։

Քննադատին ծանոթ են Պատկանյանի մասին գրված բոլոր այս տողերը։ Սակայն, ասված չէ, որ համարադրությունն ընդհանուր է, նա դրանք հասարակ է «համարադրություն»։ Հայտարարություն կամ առհարկի տուրք... Պատկանյանի նկատմամբ ներկայիս բարեփոխված ընդհանուր վերաբերմունքին։

Գծադրատար քննադատը ի չարն է գործ դնում ընթերցողի վատահոսությունը։ Առկա փաստերը հերքում են նրան։

Տակավին 1935 թվականին լույս տեսած Նալբանդյանի «Անտիպ Երկերի» համար իմ կոմենտարներն էին սահմանադատվում այն քննադատներից, որոնք աչքի առաջ ունենալով բանաստեղծի որոշ գործերը՝ նրան համարում էին սոսկ կոմկոսսոհայ բուրժուազիայի գաղափարախոսություններ ծառայող «գրական-ֆելդֆելեր»։

«Ռուսահայ գրականության մեջ,— գրել էմ ես այդ առիթով,— չկա թերևս մի այլ գրող, որի հասարակական-քաղաքական ամբողջական դեմքը ստացած լինեի այնքան ազդատված երևույթ, որքան Պատկանյանինը։ Նրան ներկայացնում են հաճախ ցարական էքսպանսիայի ազմկարար կոչնակի դերում։ Մինչդեռ չկա ուսահայ մի այլ գրող, որ այնպիսի սոսկումով արտասանած լինի ցարական Ռուսաստանի անունը, որքան հենց Պատկանյանը... բավականաչափ որոշ հակակրանք է արտահայտել Պատկանյանը նաև դեպի 60-ական թվականներին տիրապետող ազգային վերնախավերը... Ազգային-սոցիալական հոսանքի ընդհանուր գիրքներից Պատկանյանը հարվածներ էր հասցնում

¹ «Նալբանդյանը և նրա մամանակը», 11, էջ 107։

² Նույն տեղում, էջ 106 և հտ. և 119։

³ Նույն տեղում, էջ 127։

կղերա-Ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներին»¹։ Այստեղ նկատի են առնված առևտրա-վաճառական կապիտալի հայազգի կոնդոտիերներն ու «փողրատչիները», կովկասյան կղերա-աղայական դասի շարքերում գերիշխող այն տարրերը, որոնք հանդիսանում էին ցարիզմին սպասարկող կովկասահայ վերնախավերի առավել անձնվեր ջոկատները։

«Անտիպ երկերի» կոմենտարները որպես «աղգային-նիհիլիստական» դործ գատաղարտող քննադատը խնամք է դործադրել ընթերցողի ուշադրությունից մանկու իր մեղադրականը հերքող այս փաստերը։

Ինչ վերաբերում է «Նախնական և նրա ժամանակը» աշխատության մեջ Պատկանյանին նվիրված էջերին, դրանք գրված են եղել տակավին 1951 թվականին և հետագայում հարկ չի եղել մտցնելու դրանց մեջ «հավուր պատշաճի» որևէ փոփոխություն։

Քննադատը զայրացած է իմ այն մտքի դեմ, թե Պատկանյանը առաջինն էր մեղանում, որ հռչակեց և կենսագործեց ռոմանտիկական էսթետիկայի սկզբունքները։ Խոսքը վերաբերում է բանաստեղծի 50-ական թվականների նամակներից մեկում շարադրված էսթետիկական հայացքներին, որոնց քննարկումը ինձ հիմք է տվել ասելու թե՛ «Բանաստեղծին զբաղեցնում էր ոչ թե ազգի առօրյա կյանքը, նրա տիպական իրադրություններն ու դեմքերը, այլ պատմական նրա անցյալի մարտական հանգույցները, հերոսական, իդեալական բացառիկ անձնավորությունները, արտակարգ հուզիչ և հրահանգիչ անցքերը՝ ընթերցողի երևակայությունը բորբոքելու, նրա մեջ աղգասիրական զգացմունքներ վառելու համար»։ Պատկանյանի ռոմանտիկական այս մանիֆեստը հիմք էր տալիս կասկածելու, թե նրա այս ժամանակվա ստեղծագործությունը (հիշենք «Արարի արտասուքը» և «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը») կարող էր լինել բնության և կյանքի կենդանի պատկեր կամ դրանց ճանաչման գեղարվեստական դործիք։ Պատկանյանի վերոհիշյալ հայացքների և նրա ստեղծագործության մեջ արտացոլվում էին հեղինակի ռոմանտիկական էսթետիկայի և միաժամանակ նաև նրա քաղաքական մտածության հատկանշական կողմը՝ աղգային հերոսների չափազանցված հատկություններով օժտելու մտայնությունը։

Իմ գնահատականը քննադատին առիթ է տվել անելու ընդհանրացած այն եզրակացությունը, թե իբր Պատկանյանին ռոմանտիկ հայտարարելուց հետո, տպացուցված էմ համարում «նրա ստեղծագործության կյանքից կտրված և ըստ ամենայնի մերժելի լինելը» կամ որ դրանով ես մերժում եմ ռոմանտիկ պոեզիայի իմացողական նշանակությունն առհասարակ²։

Իհարկե բռնաձիգ ու անհիմն են նաև այդ հետևությունները։ Իմ ասածներից հետևում է ոչ թե այն, որ բանաստեղծի հիշատակված երկերը զուրկ են որևէ իմացողական արժեքից, այլ որ իմացողական առումով դրանք ընդգրկում են հեղինակի և նրա գաղափարակիցների հայրենասիրական տրամադրությունների և «օգակառույց ամբողջների» ոլորտը։ Պատկանյանի հավակնություններն իսկ դրանից հետո չէին գնում։ Չէ որ ինքը գրողն իսկ իր ուղղությունը համարում էր սոսկ «մեր օրերու, սեփական մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը»։ Բանաստեղծը անտարբեր չէր դեպի հայ կյանքն ու

¹ Մ. Ն. Ն. Ն. Ն. Ն., Անտիպ երկեր, Մոսկվա, 1933, էջ 534։

² Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», Նույն տեղում, էջ 229։

նրա խնդիրները: Նա չուրովի արձագանքում էր ազդը հուզող հրատապ հարցն-
րին: Սակայն նա այդ անում էր առանց հաշիվի նստելու ազդի ունի կացություն
ու պատմական հնարավորությունների հետ: Ահա իմ միտքը:

Նույնը պիտի ասել նաև հետագայում գրված նրա ողբանդանական բա-
նաստեղծությունների մասին:

Կարգացեր, օրինակ, նրա հանրահայտ այս տողերը.

Հազիվ լրացավ քսան ու մեկ տարիս,
Ազվամազ բրտավ երեսս ու ծնոտիս,
Տվեր ինձ սուրեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինեն հանեմ,
Սուր ափռաներով երկաթ կը ծամեմ,
Մեջքս այգրան ուժ, ասեր, ինչ անեմ:

Ունի՞ն արդյոք ողբանդանական այս տողերը իմացողական որևէ արժեք:
Անշուշտ, ունին: Դրանք արտացոլում են հեղինակի ու նրա համայնության
հայրենասիրական հուզամասնությունը, նրանց ազգասիրական տրամադրու-
թյունների ծայրահեղ լարվածությունը: Սակայն հազիվ թե գտնվի խելահաս
մեկը, որ համաձայնի, թե այդ տողերի մեջ տրված է հայ կյանքի օրյեկտիվ
պատկերը:

Պարզ է նաև, որ նման գնահատականով չի բացարկվում նրա ողբանդա-
նական պոեզիայի իմացողական արժեքն անհասարակ:

Զի կարելի համաստեղծության նշան գնել Հյուզոյի ողբանդանի և Բալզակի
ունիվերսի միջև: Բայց ո՞վ կարող է ժխտել ողբանդանի Հյուզոյի դերը նրան ժա-
նանակակից Ֆրանսիայի հասարակական կյանքի և պատմության իմացողու-
թյան համար: Նույնը կարելի է ասել նաև Արուսյանի և Բաֆֆու մասին: Զի
կարելի մոռացության տալ նալրանդյանի վկայությունը «Վերքի» իմացողական
նշանակության մասին: Նույնը կարելի է ասել նաև Բաֆֆու «Կայծերի» մասին.
թեպետև չմոռանալով, օրինակ, դիպուկ այն վերապահությունները, որ անում
էր Ազգայնը այդ վեպի իր հայտնի գնահատականում:

Քննադատը ինքը չի վստահանում հայտարարել Պատկանյանի՞ն ունի-
լիստ գրող, թեպետև չի վարանում նշելու իմ կողմից շփոթաբերված նրա ար-
ձակ երկերը («Չախու», «Փոռսուխին Ավագը» և այլն), որոնք բաց երևույթին
համարում է ունիվերսական ստեղծագործություններ: Կան քննադատներ, որոնք
փիճարկում են նաև այդ երկերի ունիվերսալը: Պիտի խոստովանեմ, որ ինձ այդ
հարցը չի զբաղեցրել և ոչ մի տեղ չեմ էլ պնդել, թե Պատկանյանը գրել է միայն
ողբանդանական երկեր և կամ որ նրա ողբանդանական երկերը չունեն իմացո-
ղական ուժ, արժեք: Վերջապես ոչ մի տեղ ես չեմ ներկայացրել բանաստեղ-
ծին «որպես իր ժամանակի կենսական խնդիրներից կտրված, ժամանակի առա-
ջատար ուժերին դիմադարձ կանգնած, կյանքը գեպի հետ ձգող և ոչ գեպի
առաջ մղող մի հեղինակի»: Ինչպես բաժանորդներն վերագրում է ինձ քննադատը:

Նման վերագրումները չեն առնչվում իմ գրածներին նույնիսկ այնպես,
ինչպես ծագրանկարը բնօրինակին: Եթե ես ընդգծում եմ Պատկանյանի էսթե-
տիկական մանիֆեստի կամ նրա համապատասխան գործերի իմացողական
արժեքի սահմանափակությունը, այդ իրավունք չի տալիս ասելու, թե ես ժրի-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 230:

տում եմ դրանց ղեկավարվածության արժանիքը, կամ դրանց կատարած պրոգ-
րեսիվ դերը: Այս հարցում ես ինձ մնում է միայն վերադարձնել քննադատին
«գիտական բարեխղճության տարրական նորմաները» խախտողի նրա կողմից
ինձ տված սիրալիր կոչումը:

Կարո՞ղ է արդյոք Պատկանյանի ռոմանտիկական պոեզիան դիտվել որպես
նրան ժամանակակից հայ կյանքի լիարժեք պատճեն: Այս հարցն առաջադրելու
պատիվը դժբախտաբար ինձ չի պատկանում: Ինձնից առաջ եղել են այլ «ազ-
գային նիհիլիստներ», որոնք հարցականի տակ են դրել Պատկանյանի ռոման-
տիզմի ճանաչողական լիարժեքությունը:

1902 թվականին Յուրի Վեսելովսկուն ուղղած իր նամակում Հովհաննես
Թումանյանը գրում էր. «Ճակատագրի քմահաճությամբ մեր բանաստեղծները աղ-
բել և երգել են... հեռու մեր աշխարհից... և նրանց երգերի մեջ չկան ոչ մեր
բնությունը, ոչ մեր ժողովուրդը¹: Այս տողերը գրելով Թումանյանը նկատի
ունենր Ս. Շահադիդի և Գամառ-Քաթիպայի օրինակը և ասում էր, թե ինքը չի
սիրել և որ իրեն խորթ են թվացել այդ երկու բանաստեղծները²: Ավելի ուշ, 1916
թվականին Թումանյանը նույնիսկ հայտնում էր, թե հայրենի բնությունից և
հայրենի ժողովրդից Գամառ-Քաթիպայի կտրված լինելու պատճառով՝ ինքը
նրան չի համարում լիարժեք «ազգային բանաստեղծ» և համենայն դեպս հրա-
ժարվում էր հաշվել նրան «հայոց ազգային մեծ բանաստեղծ»³:

Բնավ չժխտելով Պատկանյանի գրական տաղանդը, Թումանյանը քննադա-
տում էր համազգային թեմաներ շոշափող նրա ռոմանտիկ բանաստեղծություն-
ները, որոնց թերության աղբյուրը համարում էր այն, որ հեղինակը կտրված
էր իր պատկերած երկրի ունի իրականությունից:

Դժբախտաբար Թումանյանը չէր նկատում, որ ոչ միայն Պատկանյան-ռո-
մանտիկի ստեղծագործությունն էր կտրված Հայաստանի ունի իրականությու-
նից, այլև հայ ժողովրդի ազատագրման նրա պաշտպանած քաղաքական ուղե-
գիծը:

Ռեալիստ բանաստեղծը քննադատում էր ռոմանտիկ նախորդի գրական ուղ-
ղությունը՝ մի կողմ թողնելով նրա նստաբեկական-ֆալսական հայացքների
ռոմանտիզմը:

* * *

Այն տարբերությունը, որ գոյություն ունի Պատկանյանի էսթետիկական
մանիֆեստի և նրա ստեղծագործական ընդհանուր պրակտիկայի միջև՝ առկա է
նաև այս վերջինիս և նրա լեզվաշինարարական հայացքների միջև:

Լեզվի հարցում ես, հավատարիմ մնալով Պատկանյանի իմ գնահատականը
քննադատելու իր մեթոդին, քննադատը ի մի է խառնել հարցի տարբեր ասպեկտ-
ները և բնթերցողին մատուցում է իմ գնահատականը եղծված պատկերով:

Ինչպես գրքիս մեջ քննարկված գրեթե բոլոր հարցերին, այնպես նաև Պատ-
կանյանի լեզվաշինարարական հայացքների լուսաբանությանը ես մոտեցել եմ
պատմաքննական տեսանկյունով: Ես ջանացել եմ պարզել, թե ինչպե՞ս էր դր-
վում մեղանում նոր գրական լեզվի մշակման հարցը Նախնականից առաջ և
ո՞րն էր այն նորը, որ առաջ քաշեց նա լեզվաշինարարության խնդրում:

¹ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, V, էջ 233:

² Նույն տեղում, էջ 242:

³ Նույն տեղում, էջ 417 և հմ.:

Այսպես մոտենալով, ես չէի կարող զանց առնել Պատկանյանի լեզվաշինարարական հայացքները, որոնք մշակվել էին Նալբանդյանից առաջ: Ես պարզում եմ, որ շատերի պես Պատկանյանը ես նախապես պաշտպանում էր այն միտքը, թե նոր գրական լեզուն պիտի ձգտի մոտենալ զրարարին: «Մեկ հստակացավ աշխարհարար լեզու ունենալը ավելի մոտ կրե՞րե՞ր զրարար լեզվին», — գրում էր նա: «Զորացուցանելով մեր մեջ գրող լեզվի տեղեկությունը՝ փոքր առ փոքր սովորական կշիռներ մեզ համար վերջնույս կանոնները», — ասում էր նա: Փոքր ինչ հետո, հետևելով կարամզինյան «Գրիբ այնպես, ինչպես խոսում ես» սկզբունքին, նա առաջ էր քաշում գրական լեզվի ժողովրդայնության պահանջը և միաժամանակ գրան դոհարերում նրա համազգայնությունը²: «Մեր աշխարհարարի վիճակը, — ասում էր նա, — ավելի լավ պիտի լիներ, եթե նրա վրա ուղղարձներ... էմինը»: «Փոհասական սխալ եղավ, — հարում էր նա, — որ էմինի գլուխը դափնիներով պսակելու փոխարեն ազգը պսակեց նազարյանցների և Նալբանդյանների գլուխները»:

Քննադատի կարծիքով այս փաստերը հարկավորվել են ինձ Պատկանյանին «պրոգրեսիստների և ուսակցիոնների միջև»: տատանվողների վիճակում ներկայացնելու» համար: Քննադատն անկարող է գտնվել ըմբռնելու, որ նշելով Նալբանդյանի և Պատկանյանի լեզվաշինարարական հայացքների տարբերությունը իմ նպատակն է եղել սոսկ ուրվագծել արևելահայ գրական լեզվի նախնալուրանդանական էտապի անշար աշն պատկերը, ուսկից սկիզբ էր առնում երկու աչգ գործիչների միջև ծագած տարաձայնություններից մեկը:

Իմ գրքում մատնանշել էի Նալբանդյանի այն կարծիքը, որ Պատկանյանի թարգմանած «Ռուրիկոնի» լեզուն այլ ինչ չէ, քան տարբեր բարբառների և գրական լեզուների խառնափնթոր կիրառում: Ըստ Նալբանդյանի, թարգմանիչը հետևողականություն չի ցուցաբերել նույնիսկ կարամզինի սկզբունքը կիրառելու հարցում և իր օտարարանություններով «աղձատել է լեզվի անարատությունը», նրա նոր աշխատանքը «գրած է այնպիսի լեզվով, որով չէր խոսում ժողովրդը», «նորա լեզվի մեջ անխտիր երևում են տարբեր երկու գլխավոր ժողովրդարարականներ», — ասում էր Նալբանդյանը:

Իր սովորության համեմատ շրջանցելով Նալբանդյանի այս դիտողությունները, քննադատը հարկ է համարել միայն ասելու, որ... Նալբանդյանը գրել է գիպուկ իր տողերը... «Հանգիստ և համբերատար կերպով», համարելով Պատկանյանի թերությունը ժամանակի լեզվի հեղհեղուկ վիճակի արդյունք, օգտակար նկատել «Ռուրիկոնի» թարգմանության նպատակը և այլն... Նման ինքնասփոփանքով քննադատը միայն ակներև է դարձնում, որ ի տարբերություն Նալբանդյանի ինքն անկարող է գրադվելու բանասիրական հարցերի «Հանգիստ ու համբերատար» քննությունը, և որ իր համար անախորժ փաստերը ի վիճակի է վանել միայն Պատկանյան-բանաստեղծի՝ լեզվաշինարարական անժխտելի ծառայությունների մեծարանքով:

Գծբախտարար հարկ է լինում այս կապակցությամբ ևս հիշեցնելու, որ իմ գրքում մոռացության չեն տրված նաև գրողի անժխտելի աչգ ծառայությունները՝ տարբերանշելով գրողի լեզվաշինարարական հայացքները նրա ստեղծա-

¹ «Նալբանդյանը և նրա ժամանակը», II, էջ 297 և հտ.:

² Նույն տեղում, I, էջ 112:

³ Ռ. Պատկանյան, Երկասիրություններ, III, էջ 16:

առժամանակ լեզվի գնահատականից և շեշտելով ամենից առաջ այն միտքը, որ բանաստեղծի գրական գործերը նշանավորում էին ոչ թե գրաբարի, այլ աշխարհայրի հայթանակը: «Առաջիններից մեկն էր նա, — գրել էմ ես, — որ ոչ միայն ձևակերպում, այլև իր երկերով կենսագործում էր այն միտքը, թե ազգ դառնալու համար հայերը պետք է ունենան հանրամատչելի լեզու»¹:

Կարծես թե կամենալով կանխած լինել քննադատի այն մեղադրանքը, թե իմ ուշադրությունից վրիպել են Պատկանյանի գրական փիղեքը, գրքում նշել էի նրա «Մայր Արաքսին» և «Քյոո-օղլուն», համարելով դրանք «գրական լեզվի ժողովրդայնությանն ընդառաջող գոհարներ»²:

Այնուամենայնիվ ես չեմ անգիտացել նաև այն փաստը, որ անգամ բանաստեղծի այդ գոհարները կատարելության չէին հասցնում գրական նոր լեզուն, միտք, որ իր ժամանակ ձևակերպել է դեռ Նալբանդյանը, իսկ ավելի ուշ բանասիրաբար ակներև դարձրել արեւելահայ աշխարհայրի պատմական քերականությունը մշակողներից մեկը՝ Գր. Վանցյանը:

Վկայակոչելով վերջինիս ուսումնասիրությունը, գրել էի թե «Գամառ-Քաթիսայի շուրջին երգերի բառամթերքն ու ստուգաբանությունը գերազանցորեն գրաբար էին, քերականությունը գրաբար, արեւելյան և արեւմտյան խառն մի աշխարհագրար»³: Քննադատը ի վիճակի չի գտնվել հերքելու Վանցյանի գնահատականը, որ սպառնիչ հիմնավորում է գտել հենց «Մայր Արաքսի» նրա լեզվաքերականական վերլուծության օրինակով: Դուռ փոխարեն նա մեջ է բերել Վանցյանի գրած և հարցի հետ կապ չունեցող մի այլ հատվածը, ուր դրվատված է «Մայր Արաքսին» որպես... բանաստեղծություն: «Արեւելյան լեզուն, — գրել է այդ հատվածում Վանցյանը, — սպասում էր իր Դանթեին և Պետրարկային, նա ծնեց և առաջնության դափնին խլեց նույնիսկ Խ. Աբովյանից — դա Ռ. Պատկանյանն էր»⁴:

Մեջբերելով այս սուղերը, ուր Վանցյանը ևս յուրովի դրվատում էր Պատկանյանի գրական «գոհարը», քննադատը դրան կցում է ինչ հասցեագրված այս խրատականը, «Շատ վտանգավոր է, երբ բանասերը (իմա՝ Նալբանդյանը և նրա ժամանակը» գրքի հեղինակը) հույսը դնելով ընթերցողների անտեղյակության և կամ միամտության վրա, փոստերը խմբագրում է ըստ իր քմահաճույքի, հարմարեցնելով դրանք իր կանխակալ կարծիքներին»⁵:

Որպեսզի ընթերցողը համոզվի, թե ո՞վ է իրոք կեղեքում իր «անտեղյակություն» ու «միամտությունը», կխնդրեի բաց անել Վանցյանի գրքի այն էջերը, ուր նա տալիս է «Մայր Արաքսի» լեզվաքերականական վերլուծությունից հանած իր ընդհանուր եզրակացությունը: Այդտեղ Վանցյանը ասացուցված է համարում իր այն միտքը, թե լեզվի տեսակետից այդ բանաստեղծությունը «մի խառնուրդ է այն ամենին, ինչ-որ Ռաֆայելը լսել ու սովորել էր «ի մանկութենե» և ամփոփել «առանց որևէ հետևողականության»⁶:

¹ «Նալբանդյանի և նրա ժամանակը», 11, էջ 398:

² Նույն տեղում, 1, էջ 112:

³ Տե՛ս Գր. Վանցյան, Պատմական քերականություն արեւելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 93:

⁴ Նույն տեղում, էջ 73:

⁵ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 232:

⁶ Գր. Վանցյան, նույն տեղում, էջ 93:

«Քերականություն,—գրում է Վանյանը,—նա (Ռ. Պատկանյանը) շատ հետ է Արթուրյանից, ևս առավել այն լեզվից, որ տեսանք ներսխյան դպրոցի դասագրքերում»¹:

Պարզ է միանգամայն, որ Վանյանը ևս առերևորապես էր Պատկանյանի լեզվաչինարարական հաջողությունները նրա բանաստեղծությունների լեզվից: Եթե զրական ստեղծագործության տեսանկյունից նա հնարավոր էր համարում Պատկանյանին բարձր դնել նույնիսկ Արթուրյանից, լեզվի շինարարության հարցում նա Պատկանյանին ևս էր դնում ոչ միայն Արթուրյանից, այլև նրա ավագ ժամանակակիցներից...

Ինչպես տեսնում ենք այս հարցում ևս ևս կարող եմ հարգալիր կերպով ետ դարձնել քննադատին՝ գիտական մեթոդի և բանասիրական բարեխղճության մասին ինձ մատուցած մենտորական խրատները: Ըստ երևույթին դրանց կարիքը նա ավելի շատ ունի, քան ես:



Պատկանյան-դրույի ստեղծագործության հետ կապված իմ մի շարք դրական ասույթներին ծանոթանալուց հետո՝ ընթերցողի համար կարող է անսպասելի թվալ, որ ևս ինձ աշխուժեցնելով թույլ եմ տվել, ինչպես նրան հավատացրել է քննադատը, «զրական գաճաճ» համարելու բանաստեղծին և որ ըստ քննադատի իմ ցանկությունն է եղել ասպարեցելու, որ «սլաքարի» մեծ երգիչը սոսկ խոտրի հերոս է կամ սոսկ դրական աննշան մի գործիչ²:

Այս հարցում ևս քննադատը շահարկել է մի պրիոմ, որին դիմում է, երբ խի-պատկանություն չունի իր ունեցած գծողությունը հասցեագրելու դրան սլաքաճառ հանդիսացած անդրդվելի հեղինակություններին: Նման դեպքերում նա իմ անունը ծածկանուն է դարձնում վերջիններիս համար և նրանց փոխարեն ի՛նձ դարձնում նետերի նշափակ...

Ամենից առաջ հարկ է աչքի առաջ ունենալ, որ Պատկանյանին «գաճաճ դրույների» շարքը դասողը ոչ թե ևս եմ, այլ Նալբանդյանը³: Բերում եմ Նալբանդյանի համապատասխան տողերը, քաղված՝ 1863 թվականին բանտից եզրորդը դրած նրա մի նամակից.

«Հիշում ես, դու ինձ ասում էիր, թե Ռ. Պատկանյանը ցանկանում է ինչ-որ թերթի հրատարակել. ի՞նչ է, սկսեց հրատարակել, ինչպե՞ս է կոչվում և հասարակությունն ի՞նչ ընդունելություն ցույց տվեց: Շատ ցավում եմ, որ մեր «Հյուսիսսփայլ» արդեն գոյություն չունի և ասպարեզը մնացել է դրական գաճաճներին»:

«Գրական գաճաճներ» արտահայտությունը Նալբանդյանը բանեցրել է այսօրվա Պատկանյան-նրապարակախոսի նկատմամբ միայն, որը 60-ական թվականներին սկսված «զրական համաճարակի» պայմաններում արտոնություն էր ձևոք բերել հրատարակելու ազգային-պահպանողական «Հյուսիս» պարբերականը: Նա ցավ էր հայտնում, որ «Հյուսիսսփայլից» հետո ասպարեզը գրավել ևն հիմա նման հրատարակողություն: Ոչ մի կերպ «զրական գաճաճ» արտա-

¹ Գր. Վանյան, նշվ. աշխ., էջ 93:

² «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 225:

³ Մ. Նալբանդյան, երկերի լրակատար ժողովածու, IV, էջ 146. Նամա. նամակի թարգմանությունը, նույն տեղում, էջ 151.

հայտնությունը չէր կարող հասցեագրված լինել Պատկանյան-բանաստեղծին, որի գրական տաղանդի մասին Նալբանդյանն ուներ բարձր համարում: Նալբանդյանը, գրել էմ էս, «չէր կամենում կասկածի տակ առնել համաքաղաքացի բանաստեղծի բարի գիտավորությունները, նրա ցանկությունը՝ մտցնել հայկական մեծած ոլոկի մեջ շարժում, հաղորդել նրան հասարակական նպատակ ու եռանդ: Նալբանդյանը գիտեր, անշուշտ, որ Պատկանյանը զուրկ չէ սրտի ջերմությունից, խառնվածքի ու տաղանդի ուժից»¹:

Պատկանյանին նվիրված իմ տողերում «զաճաճ գրող» արտահայտությունը գործ է ածված միայն Պատկանյանի դեմ ուղղված Նալբանդյանի «Հայկ և Տիգրանին հիշենք միշտ, Եղբայրք» սարողության խմատը Նալբանդյանի իսկ բառերով՝ բացահայտած լինելու համար:

Պարոդիայի հեղինակը մերժում էր քննադատի պաշտպանած այն դրույթը, թե գրողի «խոսքը» հենց նրա «գործն» է: Ազատություն քարոզող գրողից նա պահանջում էր նաև քաղաքացիական արխություն, անձնազոհության պատրաստակամություն: Առանց դրան բանաստեղծը, որ «հոգեր է վարում հեռուից»՝ խոսքի հերոս է և դործի չաճաճ: Այս պահանջը քննադատը համարում է... «դոգմա և շարժում»²: Նալբանդյանի գնահատականը ոչ միայն չէր համաձայնվում նման կարծիքի հետ, այլև անձնական օրինակով կենսագործում իր իսկ այն խոսքը, թե «չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ արսորի առաջի, ոչ միայն բանիմ և գրչով, այլև կենքով և արյունով, եթե մի օր արժանի լինենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»:

Իհնչ պատճառ կարող էր ունեցած լինել Նալբանդյանը՝ Պատկանյանի «Հայկ և Լևոնին մոռանանք, Եղբայրք» բանաստեղծությանը իր «Հայկ և Տիգրանին հիշենք միշտ, Եղբայրք» սարողության հակադրելու համար:

Քննադատը մի քանի էջ է նվիրում այս հարցին, կարծես նույնատիպ ունենալով ոչ թե պարզելու, այլ միայն մթարկելու որոս խմատը: Հայտարարելով, թե զուր էմ էս Նալբանդյանի սարողության քննարկում «գրական գոտեմարտ մեծագործող անվան տակ»՝ քննադատը տրամադիր է Եղբայրական սիրո և համերաշխության զուգույն գործող Պատկանյանի բանաստեղծության հետ փոխանակած պարոդիայի սուր ռեպլիկները: Խոսքը կտուրը զցելով՝ նա աղարտում է պարոդիայի բովանդակությունը, երբ փորձում է հերքել այն իրողությունը, որ Նալբանդյանի սարողության մեղադրում էր Պատկանյանին «իրական մարտերի վտանգներից փախուստ տալու» մեջ: Այս առիթով էս, մի կողմ թողնելով Նալբանդյանին և որպես Նալբանդյանի ծածկանուն բանեցնելով «Նալբանդյանը և

¹ Նալբանդյանի խոսքը բարեհոգորեն կտուրը զցելով, քննադատն այս տողերին կցել է հետագա բացատրությունը. «Գրական գաճաճներ» ասելով Նալբանդյանը «նախ և առաջ» (՝) նկատի ունեն «Հյուսիսափայլի» գաղափարական հակառակորդներին՝ «Արշալույս Արարատյանը», «Համբավարեր Ռուսիոն», «Երեակը» և ուրիշները: Այս բացատրությունը ակներևաբար չի բխում նամակի կոնաեքստից և տուրք է վճարում այն պատճառին, թե Նալբանդյանը կարող էր Պատկանյանի օրհանը դասել «Հյուսիսափայլի» համադրանների շարքը: Վարը պիտի ասենք, որ Պատկանյանը ինքն իսկ աղաթ էր նման պատճառներից. «Հյուսիսափայլի» ղեկավարներին նա դասում է իր և իր համախոհների գաղափարական «ոսոխներին» թվում:

² «Նալբանդյանը և նրա ժամանակը», 11, էջ 457:

³ Նույն ակդում, էջ 226:

նրա ժամանակը» գրքի հեղինակի անունը, քննադատը ուղղում է ինձ «չքմեղ» հարցերի մի ամբողջ տարափ. «Ի՞նչ է նա հասկանում, երբ ասում է «փախչելով իրական մարտերի վտանգներից»։ Այդ ո՞ր մարտադաշտն է լքել Պատկանյանը, որ Ա. Հովհաննիսյանի համար վատի համբավ է ձեռք բերել։ Եվ ապա՝ այդ ո՞ր օրվանից է, որ մարտաշունչ երգերի հեղինակ Պատկանյանը դարձել է զենքից և մարտերից խուսափող երգիչ։ Պատկանյանին մի ժամանակ մեղադրում էին օտար բռնակալությունների դեմ ժողովրդին, զենքի կոչելու, զենքին ապավինած Լրդիչ լինելու համար։ Այսօր այլ երգ է երգվում»¹։

Զուր է դարձյալ քննադատի հուզմունքը։

Իր պարողիայում Նալբանդյանը Պատկանյանին մեղադրում է ոչ թե այն բանում, որ նա ժողովրդին զենքի է կոչել՝ «օտար բռնակալություններին» (sic) դեմ, այլ միայն նրա համար, որ, անտարբեր զեպի այդ նույն ժամանակ ցարական բռնակալության դեմ արձարծվող գյուղացիական ուղուցիան, նա պետերբուրգյան իր հեռակայից զենքի կոչեր էր հղում արևմտահայ գյուղացիներին... Այդ էր ակնարկում Նալբանդյանը, երբ գրում էր.

Ազատության իդձ շրթունքի վրա
Մի քանի մարդոց տեսնում ենք. այո.
Ուրեր են դոքա, ոչ երգվյալ ծառա.
Որ օտար լուծին մնան միշտ հլու։

Վամ երբ դրում էր՝

Ես այդ ամենը անում եմ բերնով,
Կեցցե սուրբ Մեսրոպ, որ մեզ գիր տվեց,
Հողեր եմ վարում հեռուից՝ խոսքով,
Հրացան իմ պեսը կուրծքին ե՛րբ սեղմեց...։

Նալբանդյանի մեղադրումները վանած լինելու համար, քննադատը մատնանշում է 70—80-ական թվականներին Ն. Նախիջևանում Պատկանյանի ծափալած գործունեությունը, որի ընթացքում նա որպես թե իր վրա էր առել «քաղաքի և նոր Նախիջևանի շրջակա գյուղերի շարատանջ աշխատավորության զբժվարին, բայց ազնիվ և հերոսական գործը»²։ Այս կապակցությամբ չեմ կարող չհիշատակել Ե. Շահազիզի վկայությունն այն մասին, թե Պատկանյանն «իսպառ անդիտացել էր նոր Նախիջևանի գյուղերի և գյուղացիների գոյությունը»։ «42 տարի ապրել ենք Ն. Նախիջևանում,— գրում էր Ե. Շահազիզը,— և մի օրից մյուսը լսած չենք եղել, թե Ռափայելը գնացել է գյուղերը... Նա մնացել է անձանոթ հայ գյուղերին և հայ գյուղը նրան»³։ Պատկանյանի նոր-նախիջևանյան գործունեությունը ուղղված լինելով տեղական նորատիպ խալիբների դեմ, փաստապես չէր կրում սուր քաղաքական բնույթ, այլ կապված էր գլխավորապես դպրոցական կամ բարեգործական ձեռնարկումների հետ։ Սակայն սրանից իսկ անկախ, չի կարելի Նալբանդյանի 1862 թվականին գրած պարո-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 220 և հտ.։

² Նույն տեղում։

³ Դրականության և արվեստի թանգարան, Ե. Շահազիզի արխիվ, «Պատկանյանի կենսագրությունը և նրա գծերով» ձեռագրի էջ 2 և 3։

դիան հերքել հենվելով Պատկանյանի 10—20 տարի հետո ունեցած գործունեության վրա:

Ռուս գյուղացիական շարժման նկատմամբ Պատկանյանի հայտ բերած անտարբերությունը պատահական մի սխալմունք չէր, այլ արմատացած հայացքների արտահայտություն: Իմ գրքում վկայակոչել էի նրա մի նամակը, ուր ասված է, թե Պետերբուրգում նստած հայ մարդը «օտարազգի Միթոֆանների» աչքը բանալու փոխարեն ավելի լավ չէ¹, որ օգտավետ լինի «յուրազգի Փանոսներին»: Ցարիզմի հայահալած քաղաքականության հարվածներից պաշտպանվելու միակ ճիշտ ուղին՝ նամակագիրը համարում էր այն, որ հայերը իրենց բախտը կապեն արևմտահայ շարժման հետ. այդ շարժմանը սատարելու համար է, որ Ռուսաստանի հայերը, կամ «պիտի մաշվեին աեզոբոսիայան մեջ (իմա՝ Ռուսաստանում—Ա. Հ.), կամ գլուխ առած խիզախեին տանջանաց և ազգային գործունեության» (իմա՝ Թուրքիայում — Ա. Հ.):

Իս պատահական չէի համարել նաև Պատկանյանի մի այլ նամակը, ուղղված 1878 թվականին Կ. Նզյանին, որի միջոցով նա ուղղում էր հավատացնել ռուս բյուրոկրատիային, որ հայերը լոյսը են ցարիզմի նկատմամբ, կամ ինչպես ինքն էր արտահայտվում, «հայերը երբեք տերության գործերի մեջ խառնված չեն»:

Ջանցառելով այս նամակների ներքին կապը և կանգ առնելով միայն դրանցից վերջինի վրա՝ քննադատը այնուամենայնիվ հնարավոր է համարել իր կատարած զանցառումը վերագրել ինձ և մեղադրել այն բանում, որ բերելով հայերի լոյսալուծության մասին Պատկանյանի գրածը՝ ես այն... պոկել եմ կոնտեքստից և լուծյան տվել, որ դրանով նա միայն կամեցել է հանգստացնել ռուս չինովնիկներին և իրավունք ստանալ Ռուստովում տպարան հիմնելու Ըստ քննադատի, տպարան հիմնելու «բարի դիտավորությամբ» հայ ժողովրդի անունից կարելի էր... հավատարիմ հպատակության հավաստիացումներ անել ցարիզմին:

Քննադատը կամենում է հավաստիացնել, թե Պատկանյանը միշտ էլ կուսակից է եղել ցարիզմին ցույց տրվելիք ակտիվ դիմադրության: Բայց ո՞վ կարող է հավատալ այդ հավաստիացման: Պատկանյանի երկերին ծանոթ մեկը անկարող է խղճի մտոք պնդել, թե նա երբևէ ակտիվ պայքար է մղել ցարիզմի դեմ: Կամ մի՞թե կարող է լինել մեկը, որ կհավատա թե Նզյանին ուղղված նամակի գրության տարում, 1878 թվականին, երբ ցարական զորահրամանատարությունը պարտված թուրքերին թելադրում էր Սան-Ստեֆանոյի դաշնագրությունը, «եղատ երգերի» հեղինակը, հակառակ իր պնդման, կարող էր իրոք եղած լինել այն համոզման, թե հայերն պիտի «խառնված լինեն» ցարական տերության գործերին...:

* * *

«Հայկ և Տիգրանին հիշենք միշտ, եղբայրք» պարոդիայի վերլուծությունը մեզ ընդհուպ կանգնեցնում է Նախնական-Պատկանյան հակամարտության այն հարցի առաջ, որ կազմում է Պատկանյանին նվիրված իմ էջերի գիտական առանցքը:

¹ Հմտ. իմ՝ Նախնական և նրա մամանակը, 11, էջ 210:

Նվ նալրանդյանի, և Պատկանյանի անմիջական վկայությունները քիչ նյութ են տալիս այդ պրոբլեմի լուսարանության համար: Նրանց երկերի ու նամակների որոշ տողերն է միայն, որ բաց են անում մեր առաջ 50—60-ական թվականների նշանավոր այդ պրոբլեմի լարված փոխհարաբերությունների վրա բնկած թանձր քողը: Բայց միայն նրանց ժամանակաշրջանի ընդհանուր ուսումնասիրությունը, հասարակական-քաղաքական բախումների քննական ուսումնասիրությունն է, որ հնարավորություն է տալիս բացահայտելու նալրանդյան-Պատկանյան հակամարտի իմաստն ու էությունը:

«Նալրանդյանը և նրա ժամանակը» աշխատությունը, որքան զիտեմ, հանդիսանում է այդ ուղղությամբ կատարված պատմաքննական լուսարանության առաջին փորձը: Խնդիրն այն չէ, որ քննադատը անհամաձայն է նալրանդյան-Պատկանյան պրոբլեմի իմ առաջարկած լուծումին, այլ՝ այն, որ նա սխալ և անընդունելի է համարում նալրանդյանին և Պատկանյանին նրանց փոխհարաբերությունների մեջ ներկայացնելու և զնահատելու այն ձգտումը, որ կազմում է Պատկանյանին նվիրած իմ էջերի բուն նպատակը:

«Առհասարակ չուկտք է մեկի (իմա՝ Պատկանյանի) զնահատականը կախման մեջ դնել մյուսից (իմա՝ նալրանդյանից)», — հրահանգում է նա¹:

Հոդվածի հենց սկզբից քննադատը փորձել է դնել այդ հրահանգը Վ. Ի. Լենինի պաշտպանության տակ: «Պատմական ծառայությունների մասին, — գրել է Լենինը, — դատում են ոչ նրանով, թե ինչ չեն արել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»:

Վ. Ի. Լենինի մոտ այն մասին է խոսքը, որ անցյալի գործիչներին չի կարելի դատել սեզ ժամանակակից գործիչներին առաջադրվելիք պահանջները համեմատությամբ: Սակայն Լենինը չի ասում, թե նրանց չի կարելի դատել իրենց ժամանակակիցներին առաջադրված պահանջների կամ իրենց ժամանակակիցների հետ ունեցած հարաբերակցությունների մեջ: Այդպես հասկանալ Լենինին՝ կնշանակեր նրան վերադրել այն միտքը, թե գործիչներին պիտի զնահատել նրանց հասարակական կառույցի ու գործառնությունների շրջանակներին դուրս:

Անցյալի պատմական ուսումնասիրությունը նպատակ չունի ներքողել կամ կշտամբել ազգային գործիչներին, այլ հասկանալ ու մեկնաբանել նրանց և պարզել նրանց ստույգ տեղը զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ: Անհրաժեշտ է վեր հանել ոչ միայն գործիչների միջև եղած գաղափարական կամ գործնական բնդհանրությունների, այլև նրանց ներհակությունների՝ օրինաչափությունը:

Քննադատը կրքոտ վերաբերմունք և բանաստեղծին վիրավորելու նպատակ է որոնում իմ այն էջերում, ուր արձանագրվում են ոչ թե նալրանդյանի և Պատկանյանի գաղափարական ընդհանրությունները, այլ նրանց տարաձայնություններն ու բախումները: Նա չի կարողանում հասկանալ, որ այդ տարաձայնություններն ու բախումները հատկանշում են ոչ թե նրանց անձնական փոխհարաբերությունները, այլ հասարակական-մշակութային տարրեր զիրար վորումները, հայտ բերելով փաստեր և իրողություններ, որոնք չեն կարող ան-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 237:

² Վ. Ի. Լենին, Երկեր, I, էջ 229:

դիտացվել հասարակական մտքի պատմության մեջ, զբաղված հետազոտողի կողմից:

Պատկանյանը երկյուղ ուներ, ենթադրել էի ես, թե Իսկանդեր-Գերցենի՝ ցարին ուղղած հայտնի նամակի՝ «ազատասիրությունը» կարող է վարակի օջախ դառնալ «Հյուսիսսփայլի» համար: Քննադատը զայրացուցիչ անակնկալ է համարում այդ ենթադրությունը, հիշեցնելով, որ նամակի գրության ժամանակ, այսինքն՝ 1856 թվականին՝ գոյություն չուներ «Հյուսիսսփայլը»:

Շնորհակալություն հայտնելով ուսուցչման համար, պիտի այնուամենայնիվ տեղեկացնեմ, որ «Հյուսիսսփայլի» տպագրման սկիզբը ինձ ևս անհայտ չէր: Այդ մասին նշում կա իմ գրքում¹: Խնդիրն այն է սակայն, որ, ինչպես հանգամանորեն շարադրված է այդտեղ, «Հյուսիսսփայլի» հրատարակման հարցը հրապարակի վրա էր նրա տպագրությունից շատ առաջ, 1853—54 թվականներին: Այդ հարցը զբաղեցրել էր ոչ միայն ամսագրի հրատարակման գործը նախաձեռնողներին, այլև Պատկանյանին: 1856 թվականին Նազարյանը դիմում էր արել «Հյուսիսսփայլի» հրատարակության համար թույլտվություն ստանալու նույն թվականին Պատկանյանը հայտնում էր Քանանյանին, որ ինքը Նալբանդյանին խոստացել է «ВЫХОДНОСТЬ» օրագիր «Հյուսիսսփայլ» անունով: «Հյուսիսսփայլը» դա հենց «Հյուսիսսփայլն» էր, որի առաջին համարը լույս տեսավ 1858 թվականի սկզբներին:

Իսկանդերի նամակի օրինակը Նալբանդյանի ձեռքը տալու կապակցությամբ Պատկանյանին համակած երկյուղը քննադատը մեկնաբանում է նրա մեջ առաջացած անհանգստությամբ, թե Նալբանդյանը կարող էր «անզգուշ վարվել քաղաքական տեսակետից մտանգամոր փաստաթղթի հետ — ընկերների շրջանում կարգալ—մասսայականացնել և զրանով մտանգել Պատկանյանին»:

Այս մեկնաբանությունը հիմնավորելու համար քննադատը անում է հիրավի անակնկալ այն ենթադրությունը, թե իբր «Պատկանյանը հետևում էր արտասահմանում տպագրվող և Ռուսաստանում տարածվող ողու ազատ մամուլին և որ նա ոչ միայն հեռու չէր կանգնած հեղափոխական ձգնաժամ ապրող Ռուսաստանի քաղաքական սուր խնդիրներից, այլև որոշակի զրական մերձեցում ուներ հեղափոխական-դեմոկրատների հետապնդած հասարակական-քաղաքական նպատակների հանդեպ»:

Առ այս պիտի հիշեցնեմ, որ Գերցենի անլեզալ հրատարակությունները ձեռքից ձեռք էին անցնում ոչ միայն ողու ռեյուցիոն-դեմոկրատների, այլ հասկանալի պատճառով նաև լիբերալ և նույնիսկ ռեակցիոն-բյուրոկրատական շրջաններում: Անգամ եթե փաստ լիներ, որ Պատկանյանը սխտեմատիկորեն հետևում էր լոնդոնի անլեզալ հրատարակություններին, զրանից զեռ չէր հետևի, թե նա համակիր դիրք ուներ զեալի ռեյուցիոն-դեմոկրատների հայացքներն ու նպատակները: Ակներախ է, սակայն, Գերցենի նամակին քննադատի

¹ Ես նշել էի այդ նամակը որպես Գերցենի «КОЛОКОЛ»-ում լույս աեսած մի գրություն: Փաստապես նամակը լույս էր տեսել նրա խմբագրած «Полярная звезда» պարբերականում: Քննադատը նկատել է և այդ սխալը, որի համար նրան առ ի սրտե հայտնում եմ իմ երախտագիտությունը: Ի դեպ սա միակ սխալն է, որ նկատել ու նշել է քննադատը: Բարեբախտաբար իսկական այդ սխալը առնչություն չունի Պատկանյանի զնահատականի հարցում ինձ վերադրված մոտացածրն այն «սխալի» հետ, որի մասին գրում է քննադատը:

² Հմմտ. «Նալբանդյանը և նրա ժամանակը», I, էջ 129 և հտ.:

³ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 216:

կողմից տրված սխալ զնահատականը Հայտնի է Լենինի այն խոսքը, թե Իսկանդերի վերոհիշյալ նամակը, ինչպես և ցարին գրած նրա մյուս նամակները. «չի կարելի այժմ կարդալ առանց գզվանքի»¹։ Այդ նամակները շատ հեռու էին ռեուլյուցիոն-դեմոկրատական մարի արտահայտություն լինելու հանգամանքից։

Այս ամենից դատ, քննադատը դիտակցարար պանց է առնում այն, ինչ գրում էր ինքը Պատկանյանը Նալբանդյանի նկատմամբ ունեցած իր երկյուղը պատճառաբանելու համար։ Իսկանդերի նամակի կապակցությամբ նա ոչ թե անհանգստություն էր հայտնում Նալբանդյանի «անդգուշության» մասին, այլ չրոմ ուղղակի, որ Նալբանդյանը «ծուռ ճանապարհի» վրա գտնվող մի «օյին» մարդ է, որին չի կարելի վստահել որևէ բան և որից պիտի հեռու մնան «Գամառ-Քաթիպա» գրական խմբակի անդամները։ Ըստ երևույթին Պատկանյանը երկյուղ էր կրում, թե համակվելով Գերցենի պաշտպանած աղատ մամուլի գաղափարներով, Նալբանդյանը կարող էր հրատարակվելիք «Հյուսիսափայլը» գեներ դարձնել «Գամառ-Քաթիպա» խմբակցության կամ այդ խմբակցության հրատարակած ժողովածուների դեմ։

Քննադատը մոլորության շավիղի վրա է դնում ընթերցողի միտքը, երբ գրում է, թե կանգ առնելով Պատկանյանի արտահայտած երկյուղի վրա, ես նրան ներկայացնում եմ ցարական Ռուսաստանում գործող ցենզուրան պաշտպանողների դերում։

Այն ամենից, ինչ ես գրել եմ Պատկանյանի, ինչպես նաև նրան համակած երկյուղի մասին, չի կարելի անել նման եզրակացություն։ Ինձ շատ լավ հայտնի է, որ Պատկանյանը մեկն է եղել ցարական ցենզուրայից («անգուլթ ռոզնեցից») տուժած հայ հեղինակներից։ Գրքիս մեջ կարելի է գտնել բազմաթիվ տողեր, ուր նշում եմ Պատկանյանի բացասական դիրքավորումը ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես նաև մասնավորապես ցարական ցենզուրայի հանդեպ։ «Անգուլթ ռոզնեցի» մասին արած նրա թափանցիկ ակնարկը կարելի է գտնել նաև Պատկանյանի մասին գրած իմ էջերում²։ Չէ՞ որ ես անդրադարձել եմ Պատկանյանի հարցին հենց այն հարածանքի կապակցությամբ, որ ձեռնարկել էր ցարական մամուլի ոստիկանությունը՝ Ռ. Պատկանյանի և Ս. Շահադիլյանի բանաստեղծությունների դեմ։ Այնուամենայնիվ այդ չէր խանգարում, որ Պատկանյանը երկյուղ ունենար թե Նալբանդյանի ամենամոտ գործակցությամբ հրատարակվելիք նոր պարբերականը՝ «Հյուսիսափայլը», կարող է «ծուռ» իր ուղղությամբ հակադրվել «Գամառ-Քաթիպա» ընկերությանը, կասեցնել այդ ընկերության գործունեությունը կամ խանգարել նրա հրատարակություններին։ Հաղորդելով նոր պարբերականի մասին, Պատկանյանը ավելացնում էր «այդ թեև ազգասիրական խնդիր է, բայց մեր կորուստի դուռն է, լավ է, եթե մի ուրիշ մարդ և ոչ Նալբանդյանը ձեռնարկեր այդ սրբազան ձեռնարկությունը, վերջինի համար... Ինչ ասեմ մնացածը, կհասկանաս, ասելս այն էր, որ չի քնենք»։

Պարզ է, որ հրատարակ հանելով Նալբանդյանի «անդգուշության» մասին իր հորինած տեսությունը և լուսնյա մատնելով Իսկանդերի նամակի կապակցությամբ Քանանյանին տված Պատկանյանի այս հրահանգը՝ քննադատը ծայրահեղ չափերի է հասցրել ընթերցողի դյուրահավատության շահարկումը։

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, XI, էջ 17։

² Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 533։

* * *

Չի սխալվում քննադատը, երբ նշում է հայ ազգային խրատումների և ուսուցողացիական շարժումների միջև եղած կապերի առկա խտիվությունը: Սխալվում է, սակայն, երբ կարծում է թե օրյեկտիվորեն առկա այդ կապերը բոլոր պարագաներում դրականապես էին արտացոլվում հայ ազգային բոլոր գործիչների կամ բոլոր հասանքների գիտակցության մեջ ուղղություն տալով նրանց գործունեությանը: «Թեև ևս հայ ազգային շարժումը, — գրել էի ես, — հանդիսանում էր հասունացող գյուղացիական կամ բուրժուական դեմոկրատական ուսուցիչի սիմպտոմներից ու արտահայտություններից մեկը, Պատկանյանի գիտակցության մեջ այն չէր համատեղվում գյուղացիական կամ բուրժուական դեմոկրատական ուսուցիչի հետ:

Աս ի՞նչ տեսնամ, — սելավ կուգա հյուսիսեն...
Հայ մարդ, թեզով, ժողով քո փաս ու փուսեն,
Առ գլուխդ, բռնե դեպի քո աշխարհ,
Քանի օրեն տունդ բանդ չես ճանշնար, —

գրում էր բանաստեղծը: Պայքարի մարտակոչ չէր ալս, այլ փախուստի հավար»: Պատկանյանի այս կարգի կոչերն են հենց, որ հարկադրում էին Նալբանդյանին ծանակելու Պատկանյանին, չհամարելու նրան ցարիզմի դեմ մղվող պայքարի ակտիվ զինակից:

Նշել էի, որ տակավին պատանի Պատկանյանն էր թշնամաբար տրամադրված դեպի 1789 թվականի Ռևոլյուցիան: Մարտը չար գազան էր նրա համար, «աշխարհավեր», «տիրասպան» և անգամ Միրաբոն «անաստվածների զլուխ»: Հետագայում, 1860 թվականին, նա դատապարտում էր այդ «ուսուցիչի» որպես կատաղի մի հոգմ, «որ հիմքից կործանեց ֆրանսիական թագավորությունը, ազնվականների դասը, քաղաքական կարգերը և սուրբ եկեղեցին»: Պատկանյանի համար այդ ամենը «աղետալի պատահարք» էին սոսկ¹:

Քննադատը առարկում է ինձ, թե Պատկանյանի այս ասույթները վերաբերում էին բանաստեղծի «երիտասարդական» մոլորություններին և թե «հասուն տարիներին» նա հիացմունքի խոսքեր է գտել ֆրանսիական ուսուցիչի հասուցելին:

Ո՞ր տարիքից է հոժարում քննադատը հասունության վկայագիր տալ Պատկանյանին: Որքան դիտեմ, «ֆրանսիական ուսուցիչի օգտին» ասված նրա խոսքերը վերաբերում են 80-ական թվականներին՝ դրի առնված այն էջերին, որ ծերունի բանաստեղծը տրտնջում էր, թե հրաժարվելով 1859 թվականին «մարտիրոս փիլիսոփաների մտաց ծնունդեն» ազատության, եղբայրության և հավասարության գաղափարներից, ֆրանսիական պետությունը հիմա չի կամենում հանդես գալ հայկական դատի օգտին... Ի՞նչ է կամենում ապացուցել քննադատը, վկայակոչելով ֆրանսիական ուսուցիչի մասին Պատկանյանի գրած այդ «հիացմունքի խոսքերը»: Մի՞թե միայն այն, որ բանաստեղծն անցավ ուսական ուսուցիչի կողմը, երբ արդեն դրված էին նրա բոլոր գլուխ-գործոցները և գրեթե ավարտված հայ հասարակական կյանքում նրա կատարած նշանակալից դերը: Բոլոր պարագաներում պարզ չէ՞, որ անգամ, եթե ծե-

¹ «Նալբանդյանի և նրա ժամանակը», 11, էջ 109:

բունի բանաստեղծի «Տիացմունքի խոսքերը» լինելին՝ ավելին, քան դառն իրո-
նիա ֆրանսիական ռեոլյուցիայի գաղափարական ժառանգորդների հասցեին,
ոչ մի կերպ զրանք չեն կարող վկայել 60-ական թթ. նրա հայացքների հարցում
չննադատի պաշտպանած տեսության օգտին: Չէ՞ որ հրապարակի վրա մնում
է այն իրողությունը, որ Ռուսաստանում առկա եղած առաջին ռեոլյուցիոն սի-
ստեմայի տարիներին, ուստի գյուղացիական շարժման արժարժման ժամա-
նակաշրջանում, մտավոր քաղաքացիական իր լիակատար հասունության տա-
րիքում գտնված Պատկանյանը բացարձակապես թշնամորեն էր տրամադրված
ֆրանսիական ռեոլյուցիայի նկատմամբ:

Հնարավոր բան է, որ Պատկանյանը 60-ական թվականներին ուսումնա-
լսություններն էր համակրողը եղած լինելը և միաժամանակ դատապարտեր
բուրժուական մեծ ռեոլյուցիան: Պարզ չէ՞ միթե, որ ոչ մի կերպ հնարավոր չէ
ապացուցել քննադատի անհուսալի այն դրույթը, թե 50—60-ական թվական-
ներին ցարիզմի նկատմամբ Պատկանյանը պրավում էր ակտիվ դիմադրության
դիրքեր: Բայց որքան դիտենք, չկա նաև որևէ փաստ, թե այդպիսի դիրքեր նա
զբաղված է եղել զեթ հետադաշում, երբ «Տիացմունքի խոսքեր էր գտնում ֆրան-
սիական ռեոլյուցիայի» օգտին:

Կիրթ ու մեծատաղանդ զրոգ Պատկանյանը չէր կարող անտարբեր մնալ
ուսումնականության խոշորագույն հեղինակությունների հանդեպ: Չի սխալ-
վում քննադատը, երբ մատնանշում է բանաստեղծի հետաքրքրությունը դեպի
Եվրոպայի և ուսումնականության պոետիկայի ներկայացուցիչները: Սակայն
անսպասելի հայտնություններ չի բերում նաև այս հանգամանքը: «50-ական
թվականների կեսերին, — գրել է մ. Լու, — Պետերբուրգում ուսանելիս Ռ. Պատ-
կանյանը ենթարկվեց ուսումնական գրականության դրական ազդեցությանը:
Պայթարելով «արվեստը արվեստին» ծառայեցնող ուսուցիչին էսթետիկայի դեմ՝
Պատկանյանի պոետիկան կրում էր իր վրա «Современник»-ի ներկայացուցիչ, Դու-
րովյուրովի, Կուրոչկինի որոշ ազդեցությունը... Ուշագրավ է նաև, որ Փ. Վար-
դանյանին գրած մի նամակում նա «ոչ ուսումնականության մարդարիտներ էր
համարում Ստանկևիչին, Բելինսկուն և Գրանովսկուն»¹:

Բայց ես չեմ մոռացել նշելու նաև, որ երիտասարդ Պատկանյանը ակնա-
ծանրով էր արտահայտվում նաև ուսումնականության պահպանողական շրջան-
ների՝ Գոնչարովի, Դանիլևսկու և ուրիշների մասին: Նա անձամբ իսկ շփվում
էր այդ գրողների հետ, համարում էր նրանց «խիստ խելոք և ազատ մտած-
մունքով» մարդիկ: Բայց հենց սրանց անմիջական ազդեցության արձագանք-
ներից մեկն էր, երբ իր ազգի ազատության համար մարտնչող բանաստեղծը
չկարողացավ համակրանքի խոսքեր գտնել 1863 թվականին ոտքի ելած լեհ
ազգի հասցեին: «Հյուսիս» թերթի այն միակ համարը, որ խմբագրել էր ան-
ձամբ Ռ. Պատկանյանը՝ Լեհաստանի ազատամարտության առթիվ հնարավոր հա-
մարեց նույնիսկ հայերի անունից հավատարիմ հպատակության զգացմունքներ
փռել ցարիզմի առաջ:

Ահնար է, որ եթե ուսումնականության դեմոկրատական հոսանքի նկատ-
մամբ Պատկանյան-բանաստեղծի հարցասիրությունն ու ակնածանքը հատ-
կանշական էին նրա ստեղծագործական ճաշակի ու բանաստեղծական նախա-

¹ Շալաևիչյան և Նրա ժամանակը, 11, էջ 116:

² Համապատասխան մեջբերումը տե՛ս նույն տեղում, 11, էջ 112:

սիրությունների համար, ապա ուստի պահպանողականների հետ ունեցած նրա առնչությունները համապատասխանում էին հայ պահպանողական շրջանների հետ Պատկանյան-ստամբուլի ունեցած կապերի ու նրա հասարակական-քաղաքական դիրքավորման համար:

* *

70—90-ական թվականներին հայ լիբերալները ազգային-պահպանողականներին չէին գատորոշում 50—60-ական թվականների կղերա-ազգայական հոսանքի ներկայացուցիչներից: Կամենալով հերքած լինել ազգային-պահպանողականների հետ Պատկանյանի ունեցած գաղափարական կապերը՝ քննադատը չի գտել այլ միջոց, քան իր ձեռքն առնել հայ լիբերալների հնացած կողմնացույցը և մատնանշել ազգայական դասի և կղերամիտների դեմ նրա վարած պայքարը: Լիբերալների պես քննադատը ևս չի նկատում, որ կղերամիտների և ազգային-պահպանողականների գաղափարական հանդիպումները սոսկ ձևական էին՝ երկուսն էլ շահարկում էին եկեղեցու հեղինակությունը: Սակայն կղերա-ազգայական հոսանքի մարդիկ հայ ազգային ընդհանրությունը նույնացնում էին հայ եկեղեցական ընդհանրության հետ: Ազգային-պահպանողականության համար հայ եկեղեցին հայ ազգության գլխավոր հենարաններից մեկն էր, բայց ոչ միակը: Եթե կղերամիտները դիտում էին եկեղեցին որպես ցարից հովանավորված կղերի քաղաքական իշխանության պատվանդան, ապա ազգային-պահպանողականները այն համարում էին բուրժուազիայի ազգային-քաղաքական ինքնորոշման և հայ կյանքում ցարի ու սուլթանի միջամտությունը սահմանափակելու հենարաններից մեկը: Բ տարբերություն կղերա-ազգայական դասից՝ բուրժուական շահերից ելնելով՝ պահպանողականները ոչ միայն չէին ոտնահարում ժողովրդական մասսաների հնամենի իրավունքները, այլև փորձում էին ակտիվացնել նրանց սպասարկող օրգանների (գյուղական համայնքի, համքարությունների) դերը հայերի ազգային ինքնորոշման պայքարին թափ հաղորդելու համար: Այդ ուղղությամբ ազգային-պահպանողականների ծավալած գործունեության գնահատականի համար բավական է հիշատակել թեկուզ միայն նրանց ղեկավարների՝ Շանշյանի և Ախվերդյանի հանրածանոթ գործունեությունը:

«Ցուցարեբելով քաղաքական շրջահայեցություն» դրում է քննադատը, Պատկանյանը «չի անդիտացել մեր ժողովրդի կյանքում էջմիածնի քաղաքական դերը՝ իրեն կենտրոնաձիգ ուժի»¹: Քննադատը չի ուզում գիտակցել, որ Պատկանյանը դրանով ձայնակցում էր հենց ազգային-պահպանողականներին: Հայտնի է, որ Արուստանին նախորդած հայ լուսավորիչների սերունդը, կանգնելով հայերի ինքնորոշման «աշխարհական» դիրքերի վրա, իրարից զատորոշում էր ազգն ու եկեղեցին: Պատկանյանը չմիացավ այդ հայացքին: Իր «Վարդապետարանում» ազգային-ազատագրական շարժման դրոշակը կրելու պատիվը նա վերապահում էր «հայ վարդապետին»: Եթե Պատկանյանի պոնգիա՝ հայ ժողովրդին ներարկում էր ազգության շունչ, ապա նրա հայագրական մեջ հայ ժողովուրդը շարունակում էր գամված մնալ ծխական համայնքի սեմին: Պատահական է, որ ազգի և եկեղեցու հաշիվները ի մի խառնող պահպանո-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 234:

դական «Արձագանքը» իր անդրանիկ առաջնորդումը ընդգծում էր. որ ինքը հետևելու է պահպանողական «Փորձ» ամսագրին, որը Գամառ-Քաթիպայի «Ազատ երգերը» դարձրել էր իր ուղեգծի առավել ցայտուն գրական հայտարարը: Ինքը՝ հայտնում է նաև, որ «Փորձը» հրատարակում էր ժամանակակից եվրոպական այն երկերի թարգմանությունները, որոնց պարունակությունը համապատասխանելու է «Ազատ երգերի» ուղղությունը¹:

Պատկանյանի ազգային-պահպանողական կողմնորոշումը ակներև է նրա հրատարակությամբ լույս տեսած «Հյուսիս» պարբերականից: Ժիշտ է, այդ պարբերականի ազգային-պահպանողական հրատարակատեսությունը Պատկանյան-հոր գրչի արդյունքն էր, սակայն Պատկանյան-որդին ժառանգել էր հորից ոչ միայն նրա գրական քանքարը, այլև նրա փշալից լեզուն ու ոճը, և միաժամանակ՝ նրա ազգային-քաղաքական շատ հայացքները: Պատահական չէ, որ քաջ պատկանյանագետներից ոմանք, և դրանց թվում նաև ինքը քննադատը, մինչև հիմա իսկ չարաչար կերպով չփոխում են հայր և որդի Պատկանյանի անստորագիր էջերը²:

60-ական թվականների սկզբներին, գրվառելով իր բարեկամներից մեկի, ոման Ալ. Պոլոնյանի «տաք ազգասիրությունը» ու «մարդասիրությունը»՝ Պատկանյանը գրում էր. «Նորա մարդասիրությունը չի խանգարում միևնույն ժամանակ զգվելով նայել... թե նախնայանի և թե նազարյանցի ծուռ ընթացքի վրա և դասել այդ երկուսին Պատկանյանի և Քանանյանի «ոսոխների» շարքը»³:

Դժվար է հասկանալ Պատկանյանի թշնամական այս դիրքը հանդեպ «Հյուսիսափայլի» և ամեն երանգի «Հյուսիսափայլականների», և թե անդիտանաք նրա գաղափարական առնչությունները ազգային-պահպանողական «Կոունկի» և «Հյուսիսի», իսկ հետագայում նաև «Փորձի», «Արձագանքի» կամ «Նոր Դարի» հետ:

Գլխավորապես ազգային-պահպանողական կողմնորոշումով կարելի է հասկանալ մեծաքանակի այն խոսքերը, որ գտնում էր նա էմիլի և Ախվերդյանի համար, նրա նամակագրությունները պահպանողական համոզմունքների տեր Քանանյանի, Եղյանի, Կրդ. Հովհաննիսյանի և Սպ. Սպանդարյանի հետ, նրա անբարյացակամությունը լիբերալ նազարյանի հանդեպ կամ նրա գաղափարական հակամարտը ռուսացիոն-գեմոկրատ նախնայանի հետ:

Ըստ քննադատի, ներկայացնելով Պատկանյանին պահպանողականների դիրքերում, ևս նրան կամեցել էմ բնութագրած լինել կապիտալիզմի զարգացմանը դիմակայողի և միջին դարերից եկող արհեստների իդեալականացնողի, — «գեպի միջնադար, գեպի նահապետականություն» կոչողի վիճակում⁴:

Սխալ է այս կարծիքը և միայն արդյունք ազգային-պահպանողականների մասին եղած այն պատկերացման, որ գալիս է լիբերալներից: Ազգի «նահապետական անցյալի» հետ չի կարելի կապել նույնիսկ հայ կղերա-ազգայական հոսանքի մարդկանց: Իմ գրքում չեղջուրած է ազգային-պահպանողականների

¹ «Արձագանք», 1882, № 1, առաջնորդող:

² Իրիկ օրինակ կարելի է նշել Պատկանյան-հոր «Հյուսիս» շարաթաթերթում տպած «Միտաբան են հայր» նշանավոր հոդվածը, որ բանասեր Հր. Մուրադյանը վերագրել է Պատկանյան-որդուն: Տե՛ս Թ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955, էջ 9:

³ «Մուրճ», 1905, I հ. էջ 21 և հտ.:

⁴ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 234:

սերտ կապը կովկասյան բուրժուազիայի այն տարատեսակության հետ, որ դժգոհում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունից, պինակիցներ որոնում տեղական մանր արտադրողականների միջավայրում և սլաշտսականության տակ առնում այդ միջավայրում հարատևող հարաբերություններն ու տրադիցիաները, — համայնատիրական ու համաքարական հիմնարկներն ու կազմակերպությունները¹:

Իմ գրքի անկողմնակալ ընթերցողը նկատած կլինի, որ մերձեցնելով Պատկանյանին այդ հոսանքի հետ, ես հաշվի եմ առնում նրա դիրքավորումը հանդեպ ցարիզմի, նրա սլաքարը կղերա-աղայական խավերի դեմ, նրա դիմաշրջումը դեպի հայ արհեստավորությունը և հայ գյուղացիությանը հասցեագրած նրա կոչերը: Ոչ մի տեղ ես չեմ ներկայացրել Պատկանյանին մականբույժ դասակարգերի անմիջական ձայնատարի դերում, շեշտել եմ, ընդհակառակը, որ «աղգային-սլահանողական համերգում նրա մարտահույզ քնարո հաճախ հնչեցնում էր ճնշված ու հարստահարված մասսաների ջղագար տրամադրություններն ու տարերային տրտմունքը»:

Նշելով Պատկանյանի աղգային-սլահանողական միտվածությունը, ես աշխատել եմ միայն ցույց տալ հասարակական-քաղաքական այն ուղին, որով քայլել է նա իր կյանքի ու գործունեության ընթացքում, հիմնականում հավատարիմ մնալով իր հայացքների աղգային-սլահանողական ակունքներին:

Սխալ է, թե վեր հանելով բանաստեղծի աղգային-սլահանողականությունը, կամ նրա աշխարհայեցության սահմանափակությունն ու հակասությունները, ես կամեցել եմ «նսեմացնել» Պատկանյանին իբրև բանաստեղծի կամ, որպես աղգային-աղատագրական շարժման պաղափարախոսի, նրան նետել ռեգրեսիվ ուժերի գիրկը: Այդ հսկայությունը անտեղի է թեկուզ հենց այն սլատճառով, որ ոչ մի տեղ աղգային-աղատագրական շարժման գաղափարախոսներին ես չեմ նույնացրել կամ լծորդել աղգի ռեգրեսիվ ուժերի հետ:

Արտահայտելով աղգային-սլահանողականների «ձախ» թևի տրամադրությունները՝ ես միաժամանակ պիտել եմ, որ Պատկանյանի քաղաքական քնարը հաճախ հնչեցնում էր լարեր, որոնք հարադատ էին հնչում նաև լիբերալների լսելիքին և «աղգային երդի» համբավ վաստակում բանաստեղծի համար:

«Եթե Պատկանյանին ժխտելու կամ նսեմացնելու միջոցով, — դրում է բնագրատը, — Ա. Հովհաննիսյանը ցանկանում է շեշտել երկու կուլտուրաների լենինյան սկզբունքը կիրառելու իր ձգտումը, ապա պետք է նկատենք, որ նույնի հասնում իր նպատակին: Չէ որ լենինը ժխտողական դիրք էր բռնում ռեակցիոն, սեհարյուրական-սուրիշկևիչյան կուլտուրայի հանդեպ և ոչ թե անցյալի բուրժուա-դեմոկրատական սրբոգրեսիվ կուլտուրայի ու գրականության հանդեպ, որի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը մեզանում հանգիսացել է Պատկանյանը»:

Այստեղ ես կարող եմ ասել դարձյալ, որ ասպարդյուն է քննադատի անհանդստությունը և ներկա դեպքում ես անտեղի լենինի դրույթների սլաշտսականության տակ մտնելու նրա փորձը:

¹ «Նալբանդյանը և նրա ժամանակը», 11, էջ 35 և հտ.:

² Նույն տեղում, էջ 119:

³ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 238:

Եթե 60-ական թվականների հայ ազգային շարժման առավել ճիշտ և առավել պրոգրեսիվ ընթացագիծը նախադրյանի որդեգրած ռեոլյուցիոն-դեմոկրատական ուղեգիծն էր, այդ չի նշանակում, թե նախադրյանի զլխավորած հայ ռեոլյուցիոն-դեմոկրատական խմբակցությունը հանդիսանում էր ազգային շարժմանն ընդառաջող միակ ուժը: Չմոռանանք, որ հարցը վերաբերում է պատմական մի դարաշրջանի, երբ ազգային շարժումը մասսայական դառնալով, Հենինի խոսքերով առած, «այսպես թե այնպես բաղադրականության ասպարեզ է գրավում բնակչության բոլոր գասակարգերը»: Նախադրյանի խոր համոզմունքով ազգի ազատագրման համար անհրաժեշտ էր ապահովել նրա բոլոր կենսունակ ուժերի ընդհանրությունը:

Մեր հույսը սակայն մեր վրա լինի,
Այսինքն ազգի մեր ընդհանրության,
Աղքատ ու հարուստ տված թե թեի՝
Այսպես թե միայն կա ճար փրկության,—

գրում էր նախադրյանը:

Ազգի փրկության համար անհրաժեշտ ազգային այդ ընդհանրության մեջ նախադրյանի համոզմունքով մտնելու էին ազգային կյանքի համար հասունացած բոլոր գասակարգերն ու հոսանքները և դրանց թվում նաև «ազգային սլահականողականները», որոնք, ի դեպ, կոմկոսահայերի մեջ առաջիններն էին, որ ոչ միայն ողջունեցին, այլև նյութական օգնություն հասցրին ապստամբ զեյթունցիներին²:

Այլ խնդիր է, որ ձգտելով ազգի ազատագրման հարցով շահագրգռված բոլոր կենսունակ ուժերի համախմբման՝ նախադրյանը քննադատում ու մերկացնում էր դրանցից շատերի գաղափարախոսական շեղումներն ու սխալները, նրանց հասարակական-քաղաքական փաստերը՝ պատրանքները: Այս ուղղությունով նա գաղափարական սուր հակամարտության մեջ էր ոչ միայն ազգային լիբերալների, այլև ազգային-սլահականողականների, դրանց թվում նաև Պատկանյանի հետ:

Ես նշել էի, որ արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումների ազդեցական երաշխիքները կոմկոսահայ սլահականողականները որոնում էին եվրոպական պետությունների և առավելապես Անգլիայի միջամտության մեջ: Այս կետում ես նրանք տարբերանշվում էին դեպի Ռուսաստանը կողմնորոշված ռուսահայ մյուս հոսանքներից:

Ազգային-սլահականողականների անգլիական կողմնորոշման հանգամանքը հատկանշական էր նաև Պատկանյանի գիրքավորման համար: Նա ես հարում էր այն գործիչների թվին, որոնք արևմտահայերի ապստամբական շարժումները համարում էին սոսկ «եվրոպայի» և առավելապես Անգլիայի միջամտությունով նրանց ազատելու միջոց:

Քննադատը ի վիճակի չի եղել առարկելու հանրահայտ այդ փաստի դեմ: Սակայն նա փորձում է մեղմացնել դրա նշանակությունը՝ շեշտելով, որ բանաստեղծը շարունակ բողոքներ էր հղում «Եվրոպայի» հասցեին և սուր արտա-

² Վ. Ի. Լենին, Երկեր, XX, էջ 499:

³ Հմմտ. նախադրյանը և նրա ժամանակը, II, էջ 35 և հա.:

հայտություններով մերկացնո՞ւմ նրա տմարդությունն ու անտարբեր վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի տառապանքները և այլն: «Պատկանյանը որոշ ժամանակ հույսեր էր կապում եվրոպական տերությունների հետ, բայց դառն իրողությունը իր հետ բերում էր զգաստացում, հայացքների վերանայում, վերադիրքավորում», — գրում է քննադատը¹:

Այստեղ ևս քննադատը փորձ է անում շրջանցել հարցի սկզբունքային կողմը:

Երբ բուրժուազիայի գաղափարախոսները անարգում կամ դատապարտում են իրենց գասակարդի հոռի բարքերն ու այլանդակությունները, այդ դեռ նշան չէ, թե նրանք դատապարտում են բուրժուական հանրակարգը: Երբ հայ ազգայնականները անարգանքի սյունին էին դաժնում Բեռլինի դաշնագրությունը ստորագրող պետությունների ընթացքը, այդ դեռ չի նշանակում, թե նրանք մեկընդմիջտ երես էին շուռ տալիս եվրոպական միջամտության հետ կապված հույսերից: Հերթական բողոքներից հետո նրանք նորից էին կալում «քաղաքակիրթ եվրոպայի» փեշից:

Դժբախտաբար այդ տեսակետից բացառություն չէր կաղմում նաև Պատկանյանը. և ընթերցողին սխալ է կողմնորոշում քննադատը, երբ հայտարարում է, թե հերթական հիասթափությունը նրան իբր «բերում էր զգաստացում, հայացքների վերանայում, վերադիրքավորում»: Չկա որևէ փաստ, թե Պատկանյանը երբևէ վերանայել կամ վերադիրքավորել է եվրոպայի նկատմամբ ունեցած իր «լուրջ ակնկալությունները»:

Պատկանյանը «անբարոյական» էր հայտարարում անդլիական կառավարությունը, բայց և մինչև իր կյանքի վերջը ակնկալող իր աչքը հառած էր սլահում «անբարոյական» այդ կառավարության վրա: Սրան համոզվելու համար բավական է, որ քննադատը վերհիշեր 1890 թվականին Գլադստոնին հասցեագրած Պատկանյանի այն նամակը, ուր նա աղերսում էր փրկել հայերին, «երկու տող» «երկու խոսք» ասել հայոց ազգի օգտին, եվրոպային համոզելու համար, «որ թուրքը շատ անհարմար է հայի նման մի ազգ կառավարելու...»: Ինչ խոսք, որ Պատկանյանը գրի էր առնում իր բողոքագրերն ու աղերսանքները սրտի արյունով, անում էր բոլոր նման դիմումները հայ ժողովրդին օգնած լինելու մտայնությունով: Բայց բավական է դա արդյո՞ք՝ նրա դիրքավորումն արդարացնելու կամ դրա մեջ հայացքների վերանայման կամ վերագնահատման նշույլ նշմարելու համար:

* * *

Ժխտելով Նալբանդյան-Պատկանյան գաղափարական հակամարտի առկայությունը՝ քննադատը կամենում է հավատացրած լինել, թե իբր ինքը «բացառիկ մեծ և առանձնակի» է համարում Նալբանդյանի դերն ու նշանակությունը և բնավ նսլատակ չունի հավասարության նշան դնելու նրա և Պատկանյանի միջև: «Նրանք, — ասում է քննադատը, — ստեղծագործական տարբեր նկարագիր ունեցող հեղինակներ են: Կան նաև խորը աշխարհայացքային տարբերություններ: Դա անմիճելի է»²:

Որո՞նք են ստեղծագործական և մանավանդ աշխարհայացքային խորը այդ տարբերությունները: Գրական կամ գաղափարաբանությունների ի՞նչ տա-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», Նույն տեղում, էջ 237:

² Նույն տեղում:

բաժանություններ ու բախումներ էին առաջացնում այդ տարրերությունները նալբանդյանի և Պատկանյանի միջև: Եվ մանավանդ հասարակական-քաղաքական իրարամերժ ու հակամարտ ի՞նչ եզրակացությունների էին հանդում Պատկանյանը և նալբանդյանը իրենց խորապես բաժանող աշխարհայացքային տարրերություններից:

Ելնելով մեթոդոլոգիորեն սխալ իր այն դրույթից, թե նալբանդյանին և Պատկանյանին պիտի զնահատել «մեկը մյուսից անկախ» կամ որ «առհասարակ չպետք է մեկի զնահատականը կախման մեջ դնել մյուսից»¹ փնադատոր խոստովում է տալ այս հարցերի պատասխանը, լավ հասկանալով, որ այդ ուղղությամբ ասված ամեն մի ճշմարիտ խոսք պիտի հիմնվեր հերքեր այդ դրույթների միջև եղած ոչ միայն դրական կամ աշխարհայացքային, այլև հասարակական-քաղաքական հակամարտ ժխտելու իր անպտուղ ջանքերը:

Սակայն, իր կամքին հակառակ, նա այնուամենայնիվ անուղղակիորեն մատնում է զրված հարցերի նկատմամբ ունեցած իր բուն կարծիքը, այն, որ փաստապես էական ոչ միայն որևէ հակամարտ, այլև որևէ տարրերություն իսկ չի նկատում Պատկանյանի և նալբանդյանի միջև: Նրա աչքում սրանք միայն ազգային միեռնույն «մսից ու արյունից» ծնված գործիչներ են:

Իր հոգվածի հենց սկզբում նալբանդյանի անվանը կցելով «հեղափոխական-դեմոկրատ» որոշիչը, հոգվածի վերջում փնադատը ասում է միայն, թե ի տարրերություն նալբանդյանի՝ Պատկանյանը «հեղափոխական-դեմոկրատ չէր»: Եվ միայն այսքան:

Հիրավի, ի՞նչ է ասում փնադատը նալբանդյանի և Պատկանյանի աշխարհայացքային «խորը տարրերությունը» նշած լինելու համար:

Հերթական «անրարեխոյճության» մեջ շամբաստանվելու համար՝ բերենք նրա խոսքերը:

«Բացառիկ մեծ և առանձնակի եղավ նալբանդյանի դերը իրեն մեծ հրապարակախոսի, քաղաքական-հասարակական մեծ գործչի, պրոֆեսիոնալ հեղափոխականի և գիտնական-փիլիսոփա մտածողի»:

Բրբե մատերիալիստ մտածող նա հայ հասարակական-գիտական միտքը արձրացրեց այնպիսի մակարդակի, որին չհասավ նախամարքսիստական շրջանի հայ հասարակական-գիտական մտքի ներկայացուցիչներից և ոչ մեկը: Լենինը Գերցենին, Բելինսկուն և Չեքնիշևսկուն համարում էր ռուս սոցիալ-դեմոկրատների նախորդը: Նալբանդյանը հայ Չեքնիշևսկին է, հայ սոցիալ-դեմոկրատների նախորդը:

Պատկանյանը «հեղափոխական-դեմոկրատ» չէր, սակայն Պատկանյանի դերը մեծ եղավ զեղարվեստական ստեղծագործության բնագավառում: Նա իր ժամանակի մեծ գրող և բանաստեղծ էր, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեծ երգիչը: Պատկանյանը առաջիններից մեկն էր, որ իր սոցիալական ստեղծագործության լավագույն նմուշներով հայ նոր սոցիալական քարձրացրեց ռուսական և եվրոպական առաջավոր սոցիալիստ մակարդակին»¹:

Ինչ հետևություններ կարելի է անել առատարան այս հայտարարություններից: Միայն այն, որ նալբանդյանը հրապարակախոս էր և ռեռլուցիոն գործիչ, մատերիալիստ-փիլիսոփա և հայկական Չեքնիշևսկի:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 238:

Հեղինակը վերջակետում է այնտեղ, ուր ընթերցողը պատրաստվում է նրանից խմանալու, թե ի՞նչն էր մեծ այդ մտածողի և գործչի Պատկանյանից տարբերանշողը և ամենից առաջ հիմնական այն հարցի պատասխանը, թե ո՞րն էր հայ ազգային շարժման նկատմամբ Պատկանյանին հակադրվող նրա «հեղափոխական-դեմոկրատական» հալազքների կոնկրետ-բովանդակությունը...

Դալով այն հարցին, թե ի՞նչն էր տարբերանշում Պատկանյանին Նալբանդյանից՝ քննադատը պարզ պատասխանի փոխարեն հեծնում է նորից իր սիրած նժույգը՝ ազատագրական շարժման երդիչ Պատկանյանի միակար իր գովքը կրկնելու համար։ Կայի՞ն տարբերություններ նրա և Նալբանդյանի դիրքավորումների մեջ արևմտահայ ազատագրաչափ շարժումների կամ գյուղացիական հարցի նկատմամբ։ Թե՛ Պատկանյանին նվիրած իր մենագրության մեջ, թե՛ իր հոդվածներում քննադատը լռում է այդ մասին։

Լռում է, օրինակ, որ Նալբանդյանը ժխտում էր հողի մասնավոր սեփականության սկզբունքը, գտնում թե պետք է արգելք դրվի հողի առք ու վաճառքի վրա, հանաչում միայն համայնքային հողատիրության իրավունք։ Նրա այդ պահանջը այլ բան չէր, քան լենինի խոսքերով ասած՝ «կալվածատիրական հողատիրության լիակատար ոչնչացման համար պայքարող գյուղացիության կողմից համասարության նկատմամբ ցուցարարվող ռեոլյուցիոն ձգտումների ձևակերպում»։ Այլ էր Պատկանյանի դիրքը. նա առաջարկում էր վաճառքի հանել թուրք և քուրդ կալվածատերերից խլելիք հողերը՝ գնորդներին հատկացնելով դրանց նկատմամբ մասնավոր կալվածատերերի իրավունք։ Դատապարտելով հին հայ ֆեոդալական հողատիրության իրավունքը, նա ասպարեզ էր բացում հողի նոր, բուրժուական սեփականության առաջ։ Նրա հողային ծրագիրը գյուղացիության ռեոլյուցիոն տրամադրությունների թելադրանք չէր, այլ բուրժուազիայի հողալին առաջադրանքների արտահայտություն։

Այն հարցին, թե պիտի լինի՞ արդյոք ազատագրված Հայաստանում աղնրվականություն, ժառանգական տիրոջոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն, Պատկանյանն իր «Վարդապետարանում» պատասխանում էր, թե՛ «Այո, պիտի լինի։ Ժառանգական տիրոջոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն պիտի ստանան նորա կամ նոցա ժառանգները, որոնք կրարձրացնեն թուրք Հայաստանի ազատության համար կամ կղրկվին կյանքերեն արյան դաշտի մեջ։ Այդպիսիք (և միայն այդպիսիք) կկազմեն Հայաստանի բարձրագույն և ամենահարուստ (հողային կալվածքով) դասակարգը»։

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, XVIII, էջ 16։

² Խեպետե Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պահված «Վարդապետարանի» ձեռագիր օրինակի վրա նշված է 1889 (և ոչ 1883 թվականը, ինչպես վրիպումով տպված է իմ գրքում) պիտի կարծել, որ ուշագրավ այդ վավերագրի մտահղացումն ու զաղափարաբանությունը զալիս էր 60-ական թվականներից։ Ինչպես գրում է Եր. Շահադիզը, 1891 թվականին իր հետ ունեցած երկամսյա զրույցների ժամանակ Պատկանյանը հայտնել է, որ «Վարդապետարանի» նպատակն է եղել ցույց տալ, թե ի՞նչ է պակասում հայերին, ինչի՞ ալելի պետք ունին նրանք, ինչի՞ վրա պետք է գլխավորապես ուշադրություն դարձնեն նրանք։ Բանաստեղծը հայտնել է նաև, թե ինքը այդ բանի վրա ջատ էր մտածել և իր Պետերբուրգում եղած ժամանակ երկար խոսել, խորհրդակցել էր այդ բանի մասին Երեմովի (Վ. Պատկանյանի) հետ։ Տե՛ս Գրակ. և արվեստի թանգարան, Եր. Շահադիզյանի գրած «Պատկանյանի կենսագրությունը էական դժերով» ձեռագիրը, էջ 93։

Փաստեր են սրանք, որոնք զլիսովին հերքում են քննադատի այն դրույթը, թե Պատկանյանը «ոչ միայն հեռու չէր կանգնած հեղափոխական ճգնաժամ ապրող Ռուսաստանի քաղաքական սուր խնդիրներից, այլև որոշակի դրական մերձեցում ուներ հեղափոխական-դեմոկրատների հետապնդած քաղաքական նպատակների հանդեպ»¹:

Միանգամայն սխալ այդ մտքից հեռու չէ այն հետևությունը, որ եթե քննադատին նախադրյալներ պատկերանում է որպես հայ Չերնիշևսկի, ապա Պատկանյանը «ակալով վերաբերմունք ցույց տալով դեպի 'Բերցենը', նրան պատկերանում է որպես հայ Գերցեն: Մի այլ տեղ ստեղծագործական ընդհանրություններ նշմարելով Պատկանյանի և Նեկրասովի կամ Պատկանյանի և Շչեգրինի միջև, քննադատը կարծես կամենում է նրան դարձնել հայ Նեկրասով կամ հայ Շչեգրին: Նման մերձեցումներով քննադատը բնական է, որ շրջանցեր նախնադրյալ-Պատկանյան հակամարտերի խնդիրը՝ վերադարձ կատարելով դեպի նախամարքսիստական շրջանի հայ զգացմունքային գրականագիտությունը, ուր նախնադրյալն ու Պատկանյանը դիտվում էին որպես «տարբեր խառնվածքների ու կարողությունների տեր», «հեղափոխական Լերգիներ...»:

Կարծում եմ, որ եթե քննադատը շրջականանար սոսկ Պատկանյան-բանաստեղծի միաշար իր մեծարանքով, այլ զբաղվեր նաև նախնադրյալին նրա հակընթաց հասարակական-քաղաքական հայացքների քննական հեռագոտությամբ՝ կարող կլիներ գուցե համոզվել, որ եթե Պատկանյանը ճիշտ էր անդրադարձնում թուրք լոնատիրության նկատմամբ՝ հայ ժողովրդի ունեցած խորը դժգոհությունները և այդ լոնատիրությունից ազատագրված տեսնելու նրա բուռն ձգտումը, ապա նա միաժամանակ սոցիալական և քաղաքական սխալ կողմնորոշում էր տալիս այդ ձգտումներն իրագործելու համար մղվող պայքարին:

* * *

Քննադատը կարծում է, թե Պատկանյանի հասարակական-քաղաքական հայացքների իմ գնահատականով ևս ոչ միայն ժխտում եմ հայ գրականության մեջ Պատկանյանի կատարած ոլորտային դերը, այլև բացասում հայ ազատագրական շարժումների դրական նշանակությունն առհասարակ: Ըստ քննադատի, Պատկանյանին տված իմ «սխալ» գնահատականը պատահական չէ, «այդ, — դրում է նա, — կապված է հայ ազգային-ազատագրական շարժումների հանդեպ պատմաբանի բացասական դիրքավորման հետ»²:

Կարող էր թվալ, որ դեթ իր այս «ընդհանրացումը» հիմնավորելու նպատակով քննադատը կթերթեր իմ գիրքը և ապացույցներ կբաղեր նրանից հայ ազատագրական շարժումների հանդեպ իմ ունեցած դիրքի սենսացիոն իր գնահատականը հիմնավորելու համար: Ինչպես կլիներ սպասել այդ, որչափ 60-ական թվականների հայ ազգային շարժման ու գաղափարախոսության հետազոտությունն ու գնահատականը կազմում է հենց իմ գրքի կենտրոնական խնդիրներից մեկը: Կարող էր թվալ նույնիսկ, թե այդքան համարձակ իր ընդհանրացումը հիմնավորելու համար նա քննադատության նշավակ կդարձներ գրեթե բոլոր իմ սուլադիր աշխատությունները, քանի որ այս կամ այն չափով դրանք հիմնական

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 216:

² Նույն տեղում, էջ 235:

նում կատարված են եղել հենց հայ ազատագրական շարժումների կամ հայ ազատագրական մտքի ուսումնասիրության հետ:

Սակայն բանասիրական բարեխղճություն պատգամող քննադատը ներկայությունում հստակահարմար է գտել քայլերու դյուրին ճանապարհով: Նա հարկ է համարել ընթերցողին հիշեցնելու միայն «էնգելսը և հայկական հարցը» վերնադրով 1931 թվականին Մոսկվայում լույս տեսած իմ գրքույկը, որի կապակցությամբ բառացիորեն գրում է, որ իբր թե՝ «Ա. Հովհաննիսյանը Թուրքիայի լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայերի ազատագրական նպատակները նույնացնում էր ցարական Ռուսաստանի հետապնդված նպատակների հետ»¹:

Քննադատը անում էր այս «մերկացումը» ավելորդ համարելով բերել իմ այդ գրքույկից այդքան լուրջ մեղադրանքը հիմնավորող թեկուզ հենց մեկ հատիկ տող:

Ստիպված եմ նշել, որ հեղինակի կողմից շարաշար ամբաստանված իմ գրքույկը հետապնդել է սոսկ մի նպատակ. Թուրքիայի լծի տակ տառապած «քրիստոնյա» ժողովուրդների և մասնավորապես հայերի ազատագրման հարցի մասին շարադրել ոչ թե իմ, այլ, ինչպես ակներև է գրքույկի վերնադրից, Ֆր. էնգելսի կարծիքը:

Քննադատն ինձ վերագրում է պրոլետարիատի մեծ առաջնորդի մտքերը բոլոր երևույթին այն նպատակով, որ հարմար միջոց ունենա վերաքննելու հայ ազատագրական շարժման մասին էնգելսի պաշտպանած հայացքները, բոլորում այս անգամ հստակորեն խեղաթյուրված վիճակի հասցնելով իմ շարադրածը:

Ամեն մեկը, որ ծանոթ է թուրքահայատակ հայերի ազատագրման մասին էնգելսի գրած էջերին կամ ծանոթիացել է նրա տարրեր ասույթների կապակցված շարադրանքին իմ գրքույկի միջոցով, չի կարող չիմանալ, որ Թուրքիայի լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդների և մասնավորապես հայերի ազատագրական պայքարը նա ոչ մի կերպ չէր շփոթում և չէր նույնացնում ցարական Ռուսաստանի հետապնդված նպատակների հետ:

Իմ գրքույկում վկայակոչված է էնգելսի ձևակերպած այն միտքը, որ թուրքական տիրապետությունը, ինչպես և արևելյան ամեն մի տիրապետություն, անկարելի է միատեղել «կապիտալիստական հասարակության հետ», որչափ զիջատիչ սատրապների և փաշաների տիրապետության ներքո բացակայում է բուրժուական արդյունաբերության հիմնական պայմանը — փաճառական անձի և նրա սեփականության ապահովությունը²: էնգելսը, — գրել եմ ես, — «բնորոշում էր հայ բուրժուազիայի եվրոպականացած տարրերին, որպես Թուրքիայի կապիտալիստական պրոգրեսի ներկայացուցիչների»: Նրան շատ լավ հայտնի էր, «ինչպես Թուրքիայի «քրիստոնյա» ժողովուրդների ազգային շարժման բուրժուական բնույթը, նույնպես նաև այն հանգամանքը, որ շարժումը գլխավորող առևտրական բուրժուազիան էր «ժամանակակից» «ալա-մրտյան», այսինքն՝ կապիտալիստական հարաբերությունների այդ զրոշակա-կիրը Թուրքիայում»³:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 235:

² «էնգելսը և հայկական հարցը», Մոսկվա, 1931, էջ 16:

³ Նույն տեղում, էջ 17:

Կասկած չկա, որ Էնգելսը Ռուրֆիայի «քրիստոնյաների» և մասնավորապես հայերի ազդեցին շարժումը գիտում էր բուրժուական և ֆեոդալական հարաբերությունների բախման պատմական ասպեկտի մեջ և պարզ է, որ նա չէր կարող գնահատել բուրժուազիայի գլխավորած այդ շարժումը որպես ինքյան ունեցիկ մի շարժում, որչափ այդ շարժումն արտահայտում էր հայ ժողովրդի ըմբոստացումը թուրք ֆեոդալիզմի և բռնատիրության դեմ և հանդիսանում ակնհայտորեն պրոգրեսիվ երևույթ:

Սակայն Էնգելսը չէր կարող նշել սոսկ շարժումն առաջ մղող ուժերի պրոգրեսիվ մղումներն ու նպատակները: Նա գիտում էր և գնահատում շարժումը նաև իր միջազգային քաղաքական կապերի ու գործառնությունների մեջ:

Հարցն այն չէ միայն, որ շարժման մեջ որպես պատմական գործոն հանդես էր գալիս հայ ժողովուրդն ու նրա արդար դատը և կամ այն, որ շարժման ընթացքում հայ ժողովրդին գլխավորում էր հայ բուրժուազիան՝ հետապնդելով պատմականորեն պրոգրեսիվ նպատակ: Նվազ կարևոր չէր նաև այն, թե միջազգային քաղաքական ինչ իրադրության մեջ էր առաջադրվում հայ ժողովրդի արդար դատը, ուսկի՞ց և ինչպե՞ս էր սպասում հայ բուրժուազիան հայ ժողովրդի ազատագրումը: Հետապնդելով պատմականորեն արդար ու պրոգրեսիվ նպատակ, շարժումը կարող էր ստանալ իդեոլոգիական սխալ հիմնավորում, գնալ նպատակավրեպ կազմակերպական կամ տակտիկական ուղիներով կամ նենալ հայ ժողովրդի շահերի համար վնասաբեր միջազգային կողմնորոշում:

Դիտելով այսպես կոչված հայկական հարցը քաղաքականության միջազգային կոնտեքստի մեջ՝ Էնգելսը բացասական գիրք է բռնում գեպի Անգլիայի «հայասիրությունը»: Նրա համար սկզբից իսկ ակներև էր Գլադստոնի և Սուբերիի «հայասիրության» և Եգիպտոսը զավթելու անգլիական քաղաքականության մեջ եղած անմիջական կապը¹:

Էնգելսը չէր հաշտվում նաև հայ ազատագրական շարժման ցարական Ռուսաստանից ունեցած ակնկալությունների հետ: Նա հրաժարվում էր հայկական շարժման մասին առաջաբան գրել «Կոմունիստական Մանիֆեստի» հայերեն թարգմանության հաջորդ ոչ թե այն պատճառով, որ անհամակիր էր հայերի ազատագրմանը, այլ երկյուղ ունենալով, թե հայ ժողովրդի ազատագրման օգտին ասված իր խոսքը կարող է օգտագործվել ի նպաստ ցարիզմի և ի վնաս ռևոլյուցիայի: «Հայերի նկատմամբ ռուսական ցարիզմը ուղում է իբր թե ազատագրողի դեր կատարել, իսկ ստրկամիտ ռուսական մամուլը առիթ չի փախցնում հայկական ազատագրությանը համակիր ամեն մի խոսք շահագործելու նվաճողական ցարիզմի օգտին», — գրում էր նա²:

Ակներև է, որ Էնգելսը հեռու էր այն պատրանքից, թե 80—90-ական թվականներին ցարիզմը կամենում էր իրոք ազատել արևմտահայերին: Նա ոչ միայն չէր նույնացնում ռուսական ցարիզմի և աբսոլյուտիստական շարժման ազատագրական նպատակները, այլև չէր ցանկանում հայկական շարժման օգտին ունենալիք իր միջամտությամբ նպաստած լինել նման պատրանքի տարածմանը: Նա համոզված էր, որ «Հայաստանի ազատագրումը թուրքերից (իմա՝ սուլթանից — Ա. Հ.) և ռուսներից (իմա՝ ցարիզմից — Ա. Հ.) հնարավոր կդառնա միայն այն օրը, երբ կտառալվի ռուսական ցարիզմը»: Այս նշանակում է,

¹ «Էնգելսը և հայկական հարցը», էջ 34.

² Նույն տեղում, էջ 33:

որ Հայաստանի ազատագրման հեռանկարը էնգելսը լծորդում էր ոչ թե ցարական Ռուսաստանի զինական միջամտության, այլ ռուսական ռևոլյուցիայի հաղթության հետ։

Ակններև է, թե բանասիրական «Բարեխղճության» ինչպիսի օրինակ է կամենում տված լինել քննադատը, երբ էնգելսի այս հայեցակետը պրոպագանդող իմ գրքուկի մասին գրում է, թե դրա մեջ հայ ազատագրական շարժման նպատակը նույնացվում է ցարիզմի նվաճողական նպատակների հետ։ Այդպիսի միտք չկա ոչ էնգելսի ասույթների և ոչ էլ այդ ասույթները շարադրող իմ գրքուկի մեջ։

Քննադատը փորձում է սխալ լույսի տակ ներկայացնել նաև Վ. Ի. Լենինի «Под чужим флагом» վերնագիրը կրող այն հոդվածը, որից իմ գրքում քաղված է «Հայկական հուղումներին» վերաբերող նշանավոր ասույթը¹։

Ֆ. էնգելսի պես Վ. Ի. Լենինը ևս Թուրքիայի դեմ բռնկած Բալկանյան շարժումներն ու «Հայկական հուղումները» իրենց հիմնական օբյեկտիվ նշանակությամբ համարում էր «ազգային-բուրժուական շարժումներ կամ ֆեոդալիզմի տարրեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղածություններ»։ Բյեկտիվորեն պրոգրեսիվ երևույթ համարելով Թուրքական ֆեոդալիզմի դեմ ուղղված հայ ազգային-բուրժուական «ջղածությունները»² էնգելսի պես Լենինը ևս «Հայկական հարցի» լուծումը չէր նշմարում Եվրոպական պետություններից որևէ մեկի, այդ թվում նաև ցարական Ռուսաստանի միջամտության մեջ։

1916 թվականին իր մի հոդվածում Լենինը գրում էր. «Համենայն դեպս հայիվ թե մեկը վաբանի ժխտել այն, որ անեքսիայի ենթարկված Բելգիան, Սերբիան, Գալիցիան, Հայաստանը իրենց ապստամբությունը անեքսիա կատարողի դեմ կանխանեն «հայրենիքի պաշտպանություն» և ճիշտ էլ կանխանեն»³։ Ի. Պատկանյանին նվիրած իր մենագրության մեջ քննադատը վկայակոչում է Լենինի այս տողերը այնպիսի մի կոնտեքստում, որից շնախազուցված ընթերցողը կարող է անել միայն այն հետևությունը, թե իբր Լենինը «հայրենիքի պաշտպանություն» էր համարում Հայաստանը զավթած Թուրքիայի դեմ բարձրացրած հայկական աճյուն մի ապստամբություն⁴։

Այդպես հասկանալ Լենինի միտքը, կնշանակեր միանգամայն խեղաթյուրել նրա գրածի իմաստը։ Փաստապես Լենինը գրում էր այն մասին, որ եթե Գալիցիան կամ Հայաստանը — երկրներ, որոնք առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օկուպացված էին ցարական բանակների կողմից — ապստամբելու լինեն ցարական օկուպանտների դեմ, դա կլինեին հայրենիքի պաշտպանության այնպիսի ակտ, որը չէր կարող լինել «սոցիալ-պատրիոտիզմի» կամ «սոցիալ-շովինիզմի» արտահայտություն⁵։ «Չդավաճանելով սոցիալիզմին, — պարզաբանում էր Լենինը, — մենք պետք է պաշտպանենք ամեն մի ապստամբություն մեր զլխավոր թշնամու դեմ, խոշոր բուրժուազիայի դեմ, — եթե դա ռեակցիոն դասակարգի ապստամբություն չէ»⁶։ Այս ամենից չի կարելի անել այն հետևությունը, թե 1916 թվականին Լենինն արտահայտվել է Թուրքիայի դեմ հայերի կազմակերպելիք ապստամբության օգտին։

¹ Տե՛ս Լ. Լ. Ե. Ի. Լենին, Երկեր, XXI, էջ 175։

² Նույն տեղում, XXI, էջ 117։

³ Տե՛ս Լ. Լ. Ե. Ի. Լենին, Պատկանյան, 1956, էջ 233։

⁴ Վ. Ի. Լ. Լ. Ե. Ի. Լենին, Երկեր, XXI, էջ 447։

⁵ Նույն տեղում, էջ 448։

Պարզ է, որ հակառակ մեր քննադատի առաջ քաշած տեսակետին, «հայկական ջղածղումներ» օբյեկտիվորեն պրոգրեսիվ կամ ուսուցիչ են ապստամբություն լինելու հանգամանքով Հենինի մոտ ևս չէր սպառնում այդ «ջղածղումներ» բնականորեն քաղաքական գնահատականի հարցը: Հենինը ևս վերջին հաշվով ելնում էր այն հարցադրումից, թե ո՞ւմ ջրադաշին են ջուր ածում այդ «ջղածղումները»՝ ուսուցիչին պրոգրեսիվորեն, թե՛ իմպերիալիստական բուրժուազիայի:

* * *

Որ հոգիւմում «դոգմատիկական» կամ «սխալ» համարելով «հայկական» ջղածղումներին էնդելսի և Հենինի ասույթների վրա հիմնված իմ գնահատականները՝ քննադատը հարկ է համարել որպես հեղինակավոր աղբյուր վկայակոչել Համամիութենական Երեսօթյունների ակադեմիայի հրապարակած «Բուլղարիայի պատմություն» գիրքը: Բուլղարիայի ազգային-ազատագրական շարժումը, ասված է այդ գրքում, «պրոգրեսիվ էր ոչ միայն Բուլղարիայի ազգային շահերի, այլև համաշխարհային պատմական տեսակետից նրանով, որ հեշտացրեց և արագացրեց ներքնապես փտած ասիական ֆեոդալիզմի ամենախարրարոսական ինքնակալության անկումը և վերապայտումը»:

Բուլղարական ապստամբության նման գնահատականների կարելի է հանդիպել սովետական, և ոչ միայն սովետական, պատմագրության բազմաթիվ այլ հրատարակությունների մեջ: Այդ գնահատականների ճշտությունը ևս չեմ վիճարկում, թեպետ չեմ կասկածում, որ անհամեմատ ավելի հեշտ և ավելի արագ կհաղթահարվեն թուրքական ֆեոդալիզմն ու ինքնակալությունը, և ավելի հիմնավոր կերպով կկատարվեր ոչ միայն բուլղարների, այլև, ինչպես գրում էր էնդելսը, — սուլթանների լծի տակ տառապող բոլոր քրիստոնյա և ոչ քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը, եթե նախապես զլուխ գալու լինեին «հակահեղափոխական կոլոսի» — ցարիզմի տապալումը:

Քննադատը առաջ է քաշում նոր այն գրույթը, թե որչափ նախադյանի և պատճառի հակառակ, 60-ական թվականներին Ռուսաստանում ստեղծված ուսուցիչին տաղնապր չհանգեց ուսուցիչի հաղթանակին և որչափ մինչև 1905 թվականը հարատևած ուսուցիչի ժամանակամիջոցում բուլղարները սուլթանների լծի տակից դուրս եկան ցարական բանակների ճգնաժամը, այդ ժամանակամիջոցի հայկական շարժման նկատմամբ հնացած կամ սխալ պիտի համարվի նախադյանի ուսուցիչին ստրատեգիան և միակ ճիշտ գիտվի այն կողմնորոշումը, որ տալիս էր արևմտահայերին Բուլղարիայի ազատագրման օրինակը:

«Ի՞նչ» գիրք կրոնի, տանի, 70-ական թվականների հայ ազատագրական շարժումների հանդեպ Մ. Նախադյանը, — հարցնում է քննադատը, — եթե սուրբելու լինեին Արդյոք նա գիմադարձ կկանգներ այդ շարժումներին, այն սլատհառով, որ այդ շարժումները ոչ թե հեղափոխական, այլ միապետական Ռուսաստանից էին օժանդակություն ստանում: Քննադատը չի կասկածում, որ նախադյանը «կկանգներ այդ շարժումների կողմը, կդառնար նրա (այսինքն՝ Էնգելի միապետական Ռուսաստանը կողմնորոշված շարժման — Ա. Հ.) բոցավառ պարագլուխը, ինչպես արեցին բուլղար հեղափոխական-դեմոկրատները նույն ժամանակաշրջանում՝ հանձին Քրիստո Բոտևի և ուրիշների»:

«Պատմա-բանասիրական հանդես», Նույն տեղում, էջ 236 և հա.:

Ի՞նչ կաներ Նալբանդյանը, եթե ապրելու իննը ղեթ մինչև ուս-թուրքական պատերազմի տարիները: Խոստովանում եմ, որ նման հարց ոչ միայն չի տվել իրեն, այլև չէր կարող տալ անցյալի մարքսիստական ուսումնասիրությանը: Ղրազվող պատմությանը կարծում եմ նման հարցով ամենից շատ կարող էին հետաքրքրվել Նալբանդյանի պառնեցող այն պերսոնաժները, որոնք իրենց պարսպ ժամերին Ղրազվում էին մեռելահարցով:

Մարքսիստ պատմաբանին կարող էր հետաքրքրել և իրոր հետաքրքրում է ոչ թե պարսպ այն հարցը, թե ի՞նչ կաներ մեռած Նալբանդյանը, եթե ապրելու լիներ մինչև 70-ական թվականները, այլ այն, թե Պատկանյանի ուղեգծից տարբեր ի՞նչ ընթացք էր նշում արևմտահայ ազատագրական շարժման համար 60-ական թվականներին կենդանի Նալբանդյանը: Ոչ նվազ չափով նրան կարող է հետաքրքրել և հետաքրքրում է իրոր նաև այն հարցը, թե ի՞նչ զիրք էին զրափում ղեպի 70-ական և հաջորդ տասնամյակների արևմտահայերի ազատագրական շարժումները հայ այն մտածողներն ու գործիչները, որոնք առաջ քաշելով Նալբանդյանի ուղեգծով պահել ու զարգացրել էին Ռուսաստանի ռեոլյուցիոն շարժման հետ իրենց ունեցած կապերը:

Ինչ խոսք, որ ռեոլյուցիոն դասակարգը կամ կուսակցությունը չի կիրառում միևնույն տակտիկան բոլոր պարագաների համար: Լեոլյուցիոն սխոուացիայի ժամանակ նպատակահարմար տակտիկան կարող է աննպատակահարմար լինել ուսակցիայի ժամանակ, և ընդհակառակը: Բայց ռեոլյուցիոն դասակարգը կամ կուսակցությունը չի կորցնում ռեոլյուցիոն հեռանկարը և ոչ մի պարագայում: Այլ կերպ են վարվում նրանք, ովքեր ուսակցիայի տարիներին հրաժարվում են ոչ միայն ռեոլյուցիոն սխոուացիայի ժամանակ կիրառված տակտիկայից, այլև ռեոլյուցիոն ստրատեգիայից առհասարակ:

80-ական թվականներին հետզհետե լիկվիդատորական այդ ուղին բռնեցին 70-ական թվականների ուս ռեոլյուցիոն շարժմանը մասնակցած հայ նարոգնիկներից շատերը: Թիկունք դարձնելով ուս ռեոլյուցիոն շարժման, նախկին հայ նարոգնիկները ձեռք մեկնեցին արևմտահայ շարժումը ղեկավարող հայ բուրժուական ազգայնականներին: Սրանց առաջադրած խնդիրներին սպասարկելու համար, նրանք կազմակերպեցին բուլղարական օրինակով ստեղծված հաղուկային խմբեր, ի սպաս ղեկով զրանք ապստամբական գործողությունների ղեկավարող ազգայնական կուսակցություններին: Շահարկելով թուրք բռնատիրության նկատմամբ արևմտահայ ժողովրդական մասսաների տարբերային խոր անբավականությունը՝ այդ կուսակցությունները զխափորեցին սպասության համար պայքարելու նրանց պատրաստակամությունը: Միայն նարոգնիկական անցյալից ժառանգած ապստամբական տակտիկան նրանց ղեկավարությամբ վերածվեց ռեոլյուցիոն բովանդակությունից զրկված ցուցարարական ելույթների, սոսկ եվրոպական պետությունների ուշադրությունը Հայաստանում ռեֆորմներ մտցնելու խնդրի վրա դամելու համար:

Ոչ 60-ական թվականներին ուսական ռեոլյուցիայի դրոշի տակ մարտնչած Նալբանդյանը, ոչ 70-ական թվականներին նրան հաջորդած հայ ռեոլյուցիոն նարոգնիկները և ոչ էլ վերջապես ավելի ուշ՝ 900-ական թվականներին ասպարեզ իջած հայ ռեոլյուցիոն մարքսիստները արևմտահայ ժողովրդին չէին պատգամում եվրոպական միջամտության շնորհիվ իրականանալիք ռեֆորմների մեջ որոնելու իր ազատագրման հեռանկարը: Իհարկե, ռեոլյուցիոն մարքսիստների և նրանց նախորդած այդ գործիչների միջև կային սկզբունքա-

յին անկամբը չէի տարբերություններ: Սակայն հայ ազգային շարժման ուղիներին և հեռանկարների նկատմամբ նրանց մեջ կար քաղաքական էական այն ընդհանրությունը, որը նրանց անջրպետում էր և՛ հայ ազգային շարժման լիբերալ-բուրժուական կամ ազգային-դեմոկրատական համարված ուֆորմիստական հոսանքներին:

Ի տարբերություն հայ ազգայնական գաղափարախոսների՝ հայ ազատագրական շարժման ռեուլյուցիոն գաղափարախոսները արևմտահայ ժողովրդի ազատագրումը շարժառնում էին ոչ թե եվրոպական պետությունների, այլ թվում նաև ցարական Ռուսաստանի դիմադրատական կամ դինական միջամտության, այլ Թուրքիայում իշխող կարգերի տապալման ընդհանուր խնդրի հետ, որ սլիտի լուծվելու միայն երկրի բոլոր ժողովուրդների միահամուռ զորակցությամբ:

Բուլղար և հայ ժողովուրդները հավասարապես տառապում էին Թուրքիայի երկաթե անուրի տակ: Նրանք հավասարապես ձգտում էին ազատության և դրա համար մղված պայքարի ընթացքում ամբողջ մարդկության առաջ մերկացնում թուրք բարբարոսության նուկալի կերպարանքը, ցույց տալով ժողովրդական հերոսամարտի անմեղ զոհերին: Անհերքելի իրողություններ են սրանք, որոնք աներկրայելի են դարձնում հայ և բուլղար ժողովուրդների մղած պայքարի պրոգրեսիվ բնույթն ու ընդհանուր պատմական նշանակությունը:

Բայց սրանով էլ հենց սահմանափակվում է զրեթե հայ և բուլղար ազատագրական շարժումների նմանությունը: Հայտնի է, որ բուլղար ժողովրդի պայքարը պսակվեց նրա քաղաքական ազատագրմամբ և հայտնի է միաժամանակ, որ արևմտահայ ժողովուրդը միայն մարտիրոսության պսակ ժառանգեց ազատության համար մղած իր պայքարում: Ակնհայտ դարձավ, որ Հայաստանը Բուլղարիա չէր, և հայ ու բուլղար ժողովուրդների ազատագրումը չէր կարող գլուխ դառնալ միևնույն ուղիով:

Բուլղարների շարժումը հաղթանակեց ոչ միայն այն պատճառով, որ ոտքի էլան երկրում բացարձակ մեծամասնություն կազմող բուլղարների հարյուր հազարավոր մարտնչոյներ, այլև այն բանի շնորհիվ, որ նրան գործոն աջակցություն ցույց տվին Բալկաններում բացարձակ մեծամասնություն կազմող սլավոն ու մյուս քրիստոնյա ժողովուրդները և բացի այդ՝ ցարական Ռուսաստանի բանակները: Բուլղարները ոչ միայն ռազմական օժանդակություն ստացան ցարական Ռուսաստանից, այլև ի վիճակի եղան իրենց ազատագրման համար նպաստավոր միջազգային իրադրությունն օգտագործել այնպես, որպեսզի սուլթանի տիրապետությունը չփոխարինվի ցարի տիրապետությամբ: Բուլղարները հանդես էին գալիս ոչ միայն որպես իրենց ազգային իրավունքների համար մաքառողներ, այլև որպես բալկանյան բոլոր ժողովուրդների եղբայրական համերաշխության ուղի հարթողներ: Ունենալով կամ որոնելով սերտ կապ բալկանյան մյուս ժողովուրդների հետ՝ նրանք ջանք չէին խնայում ընդհանուր լեզու գտնելու նաև հարևան թուրք ժողովրդի հետ¹:

Այլ էր արևմտահայերի վիճակը և արևմտահայ ազատագրական շարժման ընթացքն ու ելքը:

Արևմտահայ ազատագրական շարժումը անջրպետված էր երկրում մեծամասնություն կազմող մյուս ժողովուրդներից: Փպնություն չէին սպասում արև-

¹ См. Захарий Стоянов, Записки о болгарских восстаниях, М., 1935, т. 2, с. 78 и 79.

մտահայերը նաև հարևան երկրներին և մանավանդ վճռական օժանդակություն չստացան ցարական Ռուսաստանից: Աննպաստ էր նրանց համար մանավանդ միջազգային ընդհանուր իրադրությունը:

Ազգային-ասպետամբական տակտիկական կարող էր դրական արդյունք տալ միայն ընդհանուր ռևոլյուցիոն սիտուացիայի և թուրքահայատակ ժողովուրդների ռևոլյուցիոն ընդհանուր տեղաշարժի առկայության շրջանում: Կիրառել այդ տակտիկական 80—90-ական թվականներին ռեակցիայի պայմաններում՝ նշանակում էր մեկուսացման և ի վերջո նաև շարաշար պարտության գատապարտել ազատագրական շարժումը: Ռեակցիայի շրջանում ընդհատակյա աշխատանք տանել մասսաներին դինելու կամ նրանց դինված ասպետամբության նախապատրաստելու, այդ դեռ չի նշանակում անմիջորեն ծառայեցնել այդ աշխատանքը բախտախնդիր ցուցարարության, ինչպես անում էին ազգայնական կուսակցությունները Դում-Դափուի ցույցով կամ Օթոմանյան լանկր դրավելու փորձով:

* * *

Քիչ կան ժողովուրդներ, որոնց ազատագրական պայքարը տված լինի անձնագոհության այնպիսի օրինակներ, ինչպես արևմտահայ ժողովրդին: Բայց չկա գուցե ժողովուրդ, որի ազատագրական պայքարը ունեցած լինի նրա համար այնքան ողբերգական հետևանք, ինչպես արևմտահայ ժողովրդին:

Արևմտահայ շարժման զժրախտությունն այն էր, որ բուն երկրում բուրժուազիան չափազանց տկար էր և անկարող ապահովելու շարժման առաջընթաց զարգացումն ու ծավալումը: Դավառահայ բուրժուազիան ի վիճակի չէր գլխավորելու գալառահայ դուրացիությունը և պայքարի ընդհանուր ձևակառուցողարելու մյուս ազգությունների դուրացիության հետ, մտցնելու հայերի ազատագրական ձգտումները շարժման համապետական կամ գեթ համերկրային շրջանակների մեջ: Ազգայնորեն մեկուսացած՝ շարժման ղեկավարությունը ընկավ երկրից ու ժողովրդից կտրված պոյսահայ, զմյուռնիահայ, կիլիկիահայ և մանավանդ կովկասահայ բուրժուազիայի և գիմանագիտական կամ ավանտյուրիստական գործելակերպի հետամուտ այլևայլ կազմակերպությունների, կուսակցությունների, գործիչների ու գաղափարախոսների ձեռքը:

Ապահով իր հեռակայից՝ արևմտահայ ժողովրդին ազգային սեպարատելությունը ու հայդուկային ցաբույրիվ խմբերին դինական կամ ցուցարարական պատգամներ հղող բուրժուազիան իրական շահ ու երաշխիք չունեի աճեցնելու երկրում իր դրամագլուխը, զարգացնելու երկրի արտադրողական ուժերը: Հաղորդակցական միջոցների վիճակը և հարստահարումների սանձարձակությունը, գույքի և անձի անսողահովությունը երկրում լայն տարածել էին բացում՝ ոչ թե կապիտալի նորմալ կուտակման, այլ վաշխառու շորպաճիների ու սեղանավորների համար միայն:

Թուրքիայի տնտեսական կործանումը տակավին բուրժուական տնտեսական Քեռին էր բացատրում նրանով, որ Անգլիան երբեք թույլ չէր տալիս հողատերերին ու հողագործներին «ամբացնելու իրենց դրությունը գուլանի ու ջուհակահաստոցի, տափանի ու մուրձի բնական դաշինքի միջոցով»: Հայ առևտրական ու արդյունաբերական բուրժուազիան այս պայմաններում հանդես էր գալիս երկրում որպես արտասահմանյան, գերազանցապես անգլիա-

¹ Կ. Մ. Բ. Ե., Կապիտալ, 1, Երևան, 1954, էջ 287 ծան. 1.

կան, կապիտալի դործակալություն, որպես Թուրքիայի շուկաներում եվրոպական արտադրանքներ վաճառահանող: Նրջանառություն մեջ գնելով իր կապիտալը երկրիս դուրս կամ հանդես գալով երկրում որպես օտար կապիտալի քաղաքական ձայնատար՝ հայ բուրժուազիան և նրա զաղափարախոսները չէին ճանաչում Հայաստանի իրական կյանքն ու պայմանները, չէին ելնում գալառահայ ժողովրդի շահերից ու պահանջներից: Նրանք չէին կառուցում իրենց քաղաքական ու կազմակերպական աշխատանքը ժողովուրդների համագործակցության վրա: Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը չարաչար պարտության մատնվեց մեծ չափով հենց ազգային շարժումը մեկուսացնող ուղեգծի պատճառով:

Բուլղարական շարժման օրինակով կազմակերպված հայդուկային խմբերի դործությունները փորձությունների աղբյուր դարձան արևմտահայերի համար: Շարժման կողմնորոշումը դեպի «քաղաքակիրթ եվրոպայի» միջամտությունը կործանարար հետևանք ունեցավ ոչ միայն նրա ընթացքի և ելքի, այլև արևմտահայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար:

Իհարկե հայերի ֆիզիկական անապահովությունը առկա էր տաևալին անցյալ դարի 90-ական թվականներից շատ առաջ: Դարեր շարունակ թուրք զավթիչները կիրառում էին հայերի նկատմամբ ազգային խտրականության և հալածանքի քաղաքականություն, մերթնդմերթ կանգ չառնելով նրանց ասիմիլացման և ոչնչացման բռնի ու արյունոտ ակտերի առաջ: XIX դարի վերջերին թուրք կառավարությունը սիստեմատիկ բնույթ հաղորդեց հայկական ջարդերին, ահռելի չափերի հասցնելով դրանք մանավանդ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Մեր օրերին ավելորդ է ասել, որ հայերի ազատագրական ձգտումները կամ նույնիսկ նրանց ազգային սեպարատիզմը չէին կարող որևէ չափով արդարացնել թուրք կառավարության ոճրագործ ընթացքը: Հսկատակ որևէ ժողովրդի ձգտումը անջատվելու ու անկախ լինելու որևէ բռնատիրությունից, չի կարող հիմք ծառայել այդ ժողովրդի բնաջնջման համար:

Հայկական ջարդերի համար Թուրքիայի և նրան խրախուսող պետությունների վրա բնկնող պատասխանատվությունից տարբեր է հայկական շարժման կրած պարտության պատասխանատվությունը: Այս մի խնդիր է, որ շրջանցում է մեր քննադատը և նրա ննարավոր լուծումը դնում սխալ շավղի վրա: «Ազատագրական պայքարի տակտիկան... դրում է նա, — ստեղծում է ժողովուրդն ինքը, այն ստեղծվում է կենդանի պայքարի ընթացքում, կյանքի թելադրանքով, դարձյալ կյանքի թելադրանքով այն շտկվում էր և սրբազրվում»¹: Այս նշանակում է պարզապես, որ շարժումը կազմակերպող ու ղեկավարող ազգայնական կուսակցություններն ու հոսանքները չէ, որ պատասխանատվություն պիտի կրեն շարժման ձախողման համար, այլ անբարեհաջող ժամանակն ու հանգամանքները նախ և առաջ... հայ «ժողովուրդն ինքը», որ իբր թե հենց ինքն էլ ստեղծել էր պայքարի այդ տակտիկան և ինքն իսկ գոհ դարձել պայքարի ընթացքում ու կյանքի թելադրանքով «ստեղծած» և առանց որևէ «շտկման ու սրբազրման» կիրառած իր տակտիկային: Իր օբյեկտիվիզմով քննադատը անդիտանում է, որ այն ինչ «բնական» է, միշտ չէ, որ բանական է և որ «անհրաժեշտ» կամ «բնական» հետևանքը չե՞ղ չի վերացնում ղեկավարների պատասխանատվության հարցը, խելացի դարձնելով անխելքին, կամ արդար դարձնե-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 237:

լով մեղավորին: Ինչ խոսք, որ Արևմտահայաստանում կիրառված ազգային-ապստամբական տակտիկայի համար պատասխանատվություն է կրում ոչ թե տակտիկան «ստեղծող» ժողովուրդը, այլ այն մշակող կամ նրանով ղեկավարվող հայ ազգայնական հոսանքներն ու զրանց գաղափարախոսությունը:

Անշուշտ, մեկուսացման հունով զնացին իրենց հերթին նաև Ռուբինյի մյուս ժողովուրդների ազատագրական շարժումները՝ ղյուրացնելով զրանց միմյանցից տարանջատելու ու հաջորդաբար ճնշելու և կամ համեմայն ղեկավար շարժումների հաղթանակը տասնյակ տարիներով հետաձգելու գործը: Մեկուսացած գործելակերպի համար պատասխանատվության մեծ բաժին է ընկնում թուրք, քուրդ, արաբ ղեկավարների վրա: Եւ այդ շարժման ձախողման պատասխանատվությունից ազատ չեն կարող համարվել նաև հայ գաղափարախոսներն ու ղեկավարները:

Չի կարելի անգիտանալ, որ հայկական ապստամբությունների պարտության գործում իրենց բաժինն ունեն շարժման ազգայնական ուժանտիզմը, նրա կազմակերպչական սխտեմի սեպարատիստական բնույթը և նրա ապստամբական տակտիկայի նպատակավրեպ կիրառումը: Եթե անգամ հայ ազգայնականների կողմից լինում էին ազգամիջյան համերաշխություն գլուխ բերելու մասնակի փորձեր, ապա զրանք ապարդյուն էին անցնում: Անհնարին էր քաղաքական համերաշխության հասնել թուրք կամ քուրդ ժողովուրդների հետ, որչափ հայ ազգայնականները ձգտում էին սոսկ «ազատ Հայաստանի խնդրավարության» — ինչպես ծրագրում էին զաշնակցականները — կամ ջանում էին «հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանգամ ընդմիշտ վատել թուրքական կայսրության ճակատագրից», ինչպես ասում էին հնչակյանները: Անգիտացվում էր, որ ժողովուրդների համերաշխության հիմք կարող էր լինել ոչ թե նրանց իրարից անջատելու ձգտումը, այլ ընդհանուր նպատակի հասնելու հետամուտ նրանց գաղափարական մերձեցումն ու քաղաքական համագործակցությունը: Ազգայնորեն մեկուսացված նպատակավրեպ ապստամբությունները արժարժվում էին քուրդ ու թուրք ժողովուրդների անվստահության ու թշնամանքի միջոցառում, հանգամանք, որ հրահրում և օգտագործում էր սուլթանի կառավարությունը հայկական ապստամբություններին արձագանքելու, հայկական սխտեմատիկ կոտորածների և ի վերջո, արևմտահայերի ընդհանուր ջարդի կազմակերպմամբ:

* *

Մարքսիստների և ազգայնականների տարաձայնությունն այն մասին չէր արդար էր արդյոք, թե՞ անարդար, պրոպրեսիվ էր, թե՞ ռեգրեսիվ արևմտահայերի շարժումը: Ինչ կասկած կամ վեճ կարող է լինել այդ մասին: Հայկական շարժման արդար կամ պրոպրեսիվ նպատակադրումները չեն, որ մերժվում էին մարքսիստների կողմից, այլ նրա գաղափարաբանության սխալները, քաղաքական կողմնորոշումը, տակտիկական և կազմակերպական ուղեգիծը:

Տակավին 1903 թ. Կովկասյան սոցիալ-դեմոկրատների օրդան «Պրոլետարիատի կոիլը» իր № 2—3-ում հրապարակելով էնգելսի վերը հիշատակված նամակը, այդ առիթով գրում էր. — «Սենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաշարժար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որ»

քան կարելի է շուտ»։ Ինչ խոսք, որ համակրանք հայտնելով իր ազատության համար մարտնչող արևմտահայ եղբայրներին՝ հայ մարքսիստները չէին դադարում քննադատել շարժումը ղեկավարող ազգայնական կազմակերպությունների գաղափարախոսության վրիպումներն ու անմիտ գործողությունները։ Նրանք նախազգուշացնում էին, որ թուրքահայ շարժման ազգային մեկուսացումն ու միջազգային-ռեոլյուցիոն հեռանկարների անտեսումը կարող է վերածել այդ շարժումը ազգայնական ավանտյուրայի, դարձնել այն «հայ ազգային ռեակցիայի ռեզերվ»¹։

Հետագայում՝ 1916 թվականին՝ միանգամայն ճիշտ էր բնութագրում Ստեփան Շահումյանը մարքսիստների և ազգայնականների հակամարտը, երբ գրում էր «այս, մենք հակառակ ենք եղել զաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականության։ Մենք տեսել ենք նրանց՝ դուր, պարոններ, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք։ Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր է հայ ժողովրդի համար»։ Պատահական չէ, որ բնութագրելով մարքսիստների և ազգայնականների տարաձայնությունները, Շահումյանը ևս վերհիշում էր Ֆր. էնգելսի նամակի իմաստուն նախազգուշացումը²։

«Հայ ժողովուրդը, — հարում էր Շահումյանը, — բախտի բերումով ապրում էր երկու հրեշավոր բռնակալների՝ արյունոտ ցարի և կարմիր սուլթանի իշխանության տակ։ Նա շրջապատված էր իրենից էլ ավելի հետամնաց, զրկախոտ տաճիկ և քուրդ ժողովուրդներով Տաճկաստանում և թուրք ու վրացի ժողովուրդներով Ռուսաստանում։ Հարկավոր էր խելոք և հեռատես քաղաքականությամբ ձգտել որքան կարելի է համերաշխ տղերք հարեանների հետ, հարկավոր էր այնպես ղեկավարել քաղաքականության նալո, որ նա չջախջախվի տաճիկ կառավարության Սցիլլայի և ռուսական ցարիզմի Խարիրդայի արանքում, ինչպես խորհուրդ էր տալիս հայերին 22 տարի սրանից առաջ եվրոպացի սոցիալ-դեմոկրատ Ֆրիդրիխ էնգելսը»³։

Եսթերախոսությամբ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումն ասուլարեղ չեղավ միայն ղեկավարների վնասարեք գործունեության։ Այդ մի շարժում էր, որի դաժան փորձը հզոր միջոց դարձավ հայ ժողովրդական մասսաների քաղաքական վերադաստիարակության համար։ Պատմական ուսումնասիրության մեծ մի պլուս էր այդ, որ հայ մասսաները զիտակեցին իրենց «կույր առաջնորդների» ճակատագրական դերը և ի վերջո՝ ոտք դրեցին նաև ռեոլյուցիոն պայքարի այն ճանապարհի վրա, որը սրանից բառասուն տարի առաջ նրանց հասցրեց ազատության լուսատու ելքին։

Ի վերջոսովորում ազգային շարժումը և ի՞նչ խնդիրներ պնդում նրա առաջ, ներքին կամ արտաքին ի՞նչ ուժերի գործակցության հետ է կապում նա իր հաղթանակի հույսերը, այս հարցերին տրվող պատասխանների տարբերություն է, որ տարաձայնություններ էին առաջացնում և հիմա իսկ շարունակում են առաջացնել հայկական շարժման անցյալին նվիրված մարքսիստական և ոչ-մարքսիստական աշխատությունների մեջ՝ հանդելով հաճախ իրարամերձ գնահատականների։

¹ Ստ. Շահումյան, Երկեր, I, Երևան, 1955, էջ 290։

² Նույն տեղում, 1957, I, էջ 407։

³ Նույն տեղում, I, էջ 407 և հտ. հմտ. նույն տեղում, էջ 413։

«Արուստից մինչև Իսահակյան և Տերյան, Ալիշանից մինչև Սիամանթո և Վարուժան ինչպիսի երկար և բեղմնավոր ուղի է անցել ազատագրական պայքարի թեման, որն իր արմատներով զնում հասնում է մինչև Բուզանդ, Խորենացի և Նղիշե», — բացականչում է Պատկանյանին տված իմ «սխալ» գնահատականի խստադատ քննադատը¹:

Շատ տարօրինակ է, որ հայ աղատագրական մտքի զրական երանգավորումների նկատմամբ նրբանկատ քննադատը, որ նշմարում է անգամ Ալիշանից մինչև... Սիամանթո և Վարուժան կատարված «երկար ու բեղմնավոր» (sic) շրջադարձը այնքան կարճատես է գտնվել Պատկանյանի մինչև Նալբանդյանը և Նալբանդյանից մինչև Շահումյան տեղի ունեցած գաղափարաբանական խոչընդոտների հանդեպ...

Սովորի տակ դնելով մասնավորապես հայ ազգային-ազատագրական շարժման Նալբանդյանի մատնանշած ռեոլյուցիոն ուղեգիծը՝ նա փորձում է Նալբանդյանի հայացքներին սակավածանոթ ընթերցողին ներշնչել այն միտքը, թե նրա՝ արևմտահայերի համար մշակած քաղաքական ուղեգիծն առավել իմաստուն և առավել հեռատես արտահայտություն է գտել 1861 թ. Պոլսի ռուսական դեսպանին ուղղված մի նամակում: Իր այդ նամակում Նալբանդյանը պնդում էր, թե որպես Թուրքիայում ձավալված անգլո-ֆրանսիական միսիոներների պրոպագանդան չեղոքացնելու և թուրք փաշաների կամայականություններից ազատվելու միջոց, անհրաժեշտ է, որ այդ երկրում տարածվի «Ռուսաստանի բարոյական ազդեցությունը»:

Այդ առաջարկի նպատակահարմարության մասին մեզանում եղել են տարբեր գնահատականներ: Բայց կարծեմ դեռ չի եղել փորձ հենց այդ առաջարկի մեջ տեսնելու Նալբանդյանի քաղաքական կողմնորոշման էությունը կամ նրա քաղաքական բուն իմաստությունը: Ինչ խոսք, որ ռուսական դեսպանին նրա առած առաջարկը այլ ինչ էր, քան Թուրքիայի ներսում հայերի համար նպաստավոր ուժերի հավասարակշռություն ստեղծելու տակտիկական մի առաջարկ, որը ոչ մի կերպ չի կարող նույնացվել հայ նշանավոր ռեոլյուցիոն-դեմոկրատի քաղաքական ստրատեգիայի հետ: Ի դեպ Նալբանդյանի տակտիկական այդ առաջարկն իսկ գալիս էր այլ կողմնորոշում տալու արևմտահայերին, քան Պատկանյանը, որը փախչելով հյուսիսի «նոստալիզմից» արտաքին քաղաքական նրանց ակնկալությունները կապում էր արևմտյան պետությունների միջամտության հետ:

70—90-ական թվականների մարդիկ շատ ավելի քիչ գիտեին հայ ազատագրական շարժումների պատմությունը, քան գիտե այսօրվա մեր սերունդը: Նրանք գիտեին, որ ցարական Ռուսաստանը ազատել էր արևելահայերին ֆիզիկական բնաջնջումից և տվել նրանց տնտեսական և կուլտուրական զարգացման շոշափելի հնարավորություններ: Սակայն մոռացել էին գրեթե, թե ինչի էին ձգտել հայ ղեկավարները XVIII դարում և ինչ ստացել փաստապես:

Եթե XVIII դարի համար և մինչև XIX դարի 20-ական կամ 30-ական թվականները իրանական կամ թուրքական լուծը թոթափելու համար դրական նշանակություն էր ունեցել կոլկասահայերի և ընդհանրապես կոլկասյան ժողովուրդների շեշտակի կողմնորոշումը դեպի ցարական Ռուսաստանը՝ քաղաքական փանրակշիռ հարցերը սոսկ պատմության նախընթացներով ու անալոգիաներով

¹ «Պատմա-բանասիրական հանդես», նույն տեղում, էջ 237:

վճռող 70—90-ական թվականների հայ ազգայնականները հանդում էին այն եզրակացության, թե անցյալի պես կամ բալկանյան ժողովուրդների օրինակներով կարող է և պիտի լուծվի տնտեսապես և արևմտահայերի ազատագրման հարցը: Քիչ բան գիտեին նրանք նույնիսկ իրենց ժամանակամերձ նախնիների և նրա հակառակորդների քաղաքական տարաձայնությունների մասին: Նրանց համար նախնիները գրեթե նույն կարգի և ուղղության ազգասեր զործիչ էր ու գրող, ինչպես Պատկանյանը, Բաֆֆին կամ Արծրունին:

Զարմանալին այն չէ, որ դեպքերի թարմ տպավորության առակ և մանավանդ բուլղար ժողովրդի ազատագրման փաստով եզեշնչված Ռ. Պատկանյանը և նրա հետ մեկտեղ 70-ական թվականների հայ զործիչները հաշվի չառան հայ և բուլղար ժողովուրդների ազատագրական պայքարի առանձնահատկությունները և զրանցից հետևող քաղաքական տարբեր գործելակերպի անհրաժեշտությունը: Զարմանալին այն է, որ տասնյակ տարիներ հետո, պատմության դաժան հրափորձություններից հետո իսկ, գտնվում են դեռ հատուկ հենտ մտավորականներ, որոնք չեն կամենում նշմարել քաղաքական այն պատկերներ, որ բաժանում է արևմտահայ շարժման առանձնահատկություններից ելնող ռեյտյուցիոն ուղեգիծը շարժման բախտը Բալկանյան անալոգիաներով տնտրինող հայ քաղաքական հոսանքների ռեֆորմիստական ուղեգծից:

Նախնիների և Պատկանյանի գաղափարական հակամարտին նվիրված իմ էջերը քննադատողի մոլորությունների ազդյունն այն է, որ նա չի տարբերանշում հայ ազատագրական մտքի աջն ու ահյակը, չի գատորոշում գործիչների ազատարարչությունները նրանց սխալ կամ ճիշտ գաղափարախոսությունից ու նպատակահաս կամ նպատակավրեպ քաղաքական ուղեգծից: Հայ ազգային-ազատագրական գաղափարախոսության մեջ առկա հոսանքների ջրբաժան սիծը նա նշմարում է սոսկ ազգային ապստամբական ուղեգծին կուսակից «գյուղացիական-դեմոկրատական» և եվրոպական միջամտության ու Բուրբուայի եւրոպին ռեֆորմների հետամուտ «լիբերալ-բուրժուական» հոսանքների միջև: Եւայց նա չի նշմարում ազատագրական շարժումը դեպի եվրոպական պետությունների միջամտություն: Կողմնորոշող Պատկանյանի ազգային ռեֆորմիստական և այն դեպի ազդարային ներքին հեղաշրջումը կողմնորոշող նախնիների ազգային-ռեյտյուցիոն ուղղությունների միջև եղած տարբերությունը:

Քննադատը չի նկատում, որ արևմտահայ գյուղացիներին «ապստամբական կոչեր» հղող հայ զործիչներից ոմանց շահագրգռող գյուղացիական ռեյտյուցիալի հաղթանակը չէր, այլ գյուղացիների արյան տուրքը Արևմտյան Հայաստանում պետությունների միջամտությամբ բուրժուական ռեֆորմներ անցկացնելու համար: Քննադատը չի գիտակցում, որ շարժման սկզբունքային հակադիր բեկոնների առկայությունն է, որ հիմք է տալիս ջրբաժանման գիծ անցկացնելու նրա ռեֆորմիստական և ռեյտյուցիոն գաղափարախոսությունների միջև: Նա աչք է գոցում այն փաստի առաջ, որ շարժման տարրեր ու անհամատեղելի այս գաղափարախոսությունների շուրջն էր գնում բոտ էություն նախնիների և Պատկանյանի գաղափարական հակամարտը:

«Թուսիո ազատությունը բնդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի», — գրում էր նախնիները: Ցավն այն չէ, որ իր ամբողջ կյանքի ընթացքում Պատկանյանը չընկալեց նախնիների հիմնական այս միտքը և զնաց հայկական շարժումը ազգային մեկուսացման դատապար-

տող ազգային-աեֆորմիստական հոռանքի ուղղությամբ: Ցավն այն է, որ Նախնականից և Պատկանյանից հետո իսկ առիթ է լինում հանդիպելու հայ հասարակական մտքի պատմությանը կամ հայ բանասիրության դրչին ծառայող մարդկանց, որոնց դեռ հարկ կա պարզաբանել լճական այն նշանակությունը, որ ունի Նախնական-Պատկանյանի գաղափարական հակամարտը հայ ազատագրական շարժման ընթացքն ու ելքը դիտականորեն լուսաբանելու տեսակետից:

К ВОПРОСУ ОБ ИДЕЙНОМ ПРОТИВОБОРСТВЕ НАЛБАНДЯНА И ПАТКАНЯНА

АШОТ ИОАННИСЯН

(Р е з ю м е)

Статья написана в ответ на выступление Г. Мурадяна¹, направленное против характеристики позиции Р. Патканяна, данной в моей книге «Налбандян и его время».

В этой книге мною изучалась история идейных расхождений Налбандяна с Патканяном по вопросам языка, литературы, журналистики и освободительной борьбы армянского народа против царского самодержавия и султанского деспотизма. Я пришел к выводу, что по всем этим вопросам упомянутые деятели занимали диаметрально противоположные позиции, что приводило их к идейному противоборству.

Направив свою статью против выводов моей книги, Г. Мурадян построил свои возражения на перечислении общезвестных заслуг Патканяна, восхвалении его бесспорных литературных дарований и не менее известных мотивов его свободолюбивой поэзии. Обойдя приведенные мною факты резких выпадов Патканяна против Налбандяна и игнорируя наличие их идейного противоборства, оппонент пытается ставить под вопрос научную правомочность выдвинутой мною проблемы и по существу снять с обсуждения негодный ему факт принципиальных противоречий между взглядами Патканяна и Налбандяна, определявших собою исходные идейно-политические позиции двух противоположных направлений в истории общественной мысли и освободительного движения армянского народа второй половины прошлого века — революционно-демократического, с одной стороны, и буржуазно-реформистского, с другой.

В тексте ответной статьи я ставлю себе задачу восстановить содержание данной мною оценки Патканяна, крайне искаженной в изложении оппонента.

В последних разделах статьи я был вынужден остановить внимание читателя на критическом анализе установок оппонента по вопросу оценки национально-освободительного движения западных армян конца XIX столетия. Это было тем более необходимо, что под шумок критики моих «вульгарно-социологических ошибок» оппонент протаскивает в своей статье идею освобождения западных армян с помощью царизма, старую, в корне ошибочную концепцию, расхажившую не только со взглядами революционных демократов 60-х годов, но и с высказываниями основоположников марксизма-ленинизма и их армянских последователей начала XX века.

¹ См. «Историко-филологический журнал», 1958, № 3.